ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ

<< ՎԱՅՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

2023-2028ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ՝

Պաշտոնական կայք https://vayq1.schoolsite.am

Զարգացման ծրագրի կառուցվածքային սխեման

Նախաբան

1.Իրավիճակի վերլուծություն:

2. Հաստատության գործունեությունը:

3 Նպատակների և խնդիրների սահմանում:

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց::

5.Պատասխանատուները:

6.Արդյունքների գնահատման չափանիշները;

7. Զարգացման ծրագրի ռիսկերը;

8 .Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները:

9 Վերահսկողության մեխանիզմները:

Վերջաբանի փոխարեն

Նախաբան

Մանկավարժը մարդկային հոգու ինժիներն է...

Միխայիլ Կանինին

Կրթությունը կարևորագույն տեսական-պրակտիկ ընթացակարգ է, որով մարդը ձեռք է բերում սովորություններ, մեթոդներ, հմտություններ, կարողունակություններ, համոզմունքներ և էթիկական սկզբունքներ՝ կապված որոշակի գիտելիքների հետ: Այդ գիտելիքները փոխանցվում և ձուլվում են սերնդեսերունդ՝ մարդկության պատմության ընթացքում: Կրթությունն այն կարևորագույն գործոնն է , որի արդյունավետ, գիտելիքահեն, արդի կրթական

բարեփոխումների իրականացման միջոցով կունենանք կիրթ, գրագետ սերունդ, որոնք կլինեն շարունակողները ինչպես ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ համայնքային բարեփոխումների իրականացման, իրատեսական ու գիտելիքահեն տնտեսության ստեղծման տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցում իրականացվող բարեփոխումներն ունեն միջազգային կրթական փորձի լավագույն չափանիշներին համապատասխան կրթական համակարգին հասնելու ուղղվածություն:

Այսօր դա ժամանակի թելադրանք է, քանզի նորարարական ու տեխնոլոգիական արագ զարգացող աշխարհում պետք է ունենալ զուգահեռ ընթացք, որի համար հանրակրթական դպրոցներում անհրաժեշտ է որդեգրել և իրականացնել համապատասխան բարեփոխումներ և մոտեցումներ:

Կարևոր է, որ հասարակության մեջ լինեն քննադատական մտածողության կոմպետենցիայով օժտված անհատներ, որոնք կներդնեն իրենց գիտելիքներն ու կարողունակությունները՝ լուծումներ տալու թե՛ գիտական, թե՛ սոցիալական խնդիրներին:

Կրթական համակարգն իր մեջ պետք է ամբողջացնի և համախմբի բազմաճյուղ բոլոր ռեսուրսները (ծնողներ, ուսուցիչներ, սովորողներ և այլն) ու այդ գործընթացի մասնակիցների ներուժը՝ համագործակցելով դպրոցի ու համայնքի հետ: Որակյալ կրթությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Որպես կրթության բնագավառի գերխնդիր կարևորվում է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների ՝ իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորությունը: Հետևաբար այն խիստ արդիական է, քանզի իր վրա է վերցնում հարափոփոխ և սրընթաց զարգացող աշխարհի պահանջներին համապատասխան մարդու և քաղաքացու ձևավորման ողջ պատասխանատվությունը:

<<Վայքի հիմնական դպրոց >>ՊՈԱԿ-ի 2023-2028թթ-ի զարգացման ծրագրի հիմքում ընկած են ՀՀ կրթուրյան, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը https://www.arlis.am/documentview.aspx?docid=168835 և զարգացման ծրագրի փորձաքննության չափանիշները, որոնք հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023թ-ի ապրիլի 18-ի N 399-Ա հրամանով:

Հիմք ընդունելով այս փաստաթղթերը, դպրոցում իրականացվող ներքին և արտաքին գնահատման չափանիշները, մանկավարժական կոլեկտիվի և սովորողների ձեռքբերումներն ինչպես նաև առաջարկությունները, դպրոցում առկա հիմնախնդիրները և համայնքի կարիքները՝ կազմվել է <<Վայքի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը.

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքը

<< Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության >> ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն:

<< Կրթության մասին >>օրենք:

<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին >> ՀՀ օրենքը:

<<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենք և այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

<<Սահմանադրություն>>:

Հանրակրթության պետական չափորոշիչ:

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը:

<<Վայքի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի 2023-2028 թթ-ի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել դպրոցի տնօրենի, տնօրենի տեղակալների, մանկավարժական նախորդ ուսումնական տարիների հաշվետվությունները, հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Հաշվի են առնվել նաև հաստատության մանկավարժական , ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023թ-ի փետրվարի 9-ի N181_Ն որոշման 16-րդ կետի :

Դպրոցը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային անձնական, ոչ գույքային իրավունքներ, պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող : Դպրոցն ունի ՀՀ զինանշանի և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ: Դպրոցն ունի պաշտոնական կայք https://vayq1.schoolsite.am

Հաստատության գործունեությունը

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյոր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական , հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով; Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի , այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է :

Դպրոցի գործունեությունը հիմնված է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման , ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման վրա:

<<Վայքի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի առաքելությունը

Դպրոցի առաքելության նպատակը ուսման տարբեր կարիքներն են սովորողի ողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ հմտություններով ու կոմպետենցիաներով:

Դպրոցը երաշխավորում է ժողովրդավարական հասարակության համար անհատի ձևավորում՝ խթանելով գիտական , լեզվական, մշակութային ձեռքբերումները, քննադատական մտածողության զարգաւցումը:

Դպրոցը պատասխանատու է գիտելիքի, կարողությունների ձևավորման յուրացման համար, որոնց հասնելու հիմքը որքան ուսուցումն է, նույնքան՝ ուսումնառությունը:

Դպրոցի առաքելությունը սովորողներին ազգային հենքի վրա որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը՝ հետագա շարունակական ուսումնառությամբ և կյանքի համար նախապատրաստվածությամբ:

- Յուրաքանչյուր սովորողի համար՝ բարենպաստ կրթական միջավայրում, զարգացնելու նրանց ներուժն ու բարեվարքությունը ;
- Ազգային , հոգևոր և մշակութային արժեքների ուսուցանում:
- Հայրենասիրական դաստիարակության կազմակերպում:
- Ուսման որակի բարձրացում:
- Բազմակարծիք, ներառական, մասնակցային, արժեքային միջավայրի ապահովում:
- Սոցիալական, մշակութային, սովորել սովորեցնելու կոմպետենցիաների զարգացում՝ ապահովելով սովորողի կյանքի տարբեր իրավիճակներում ինքնուրույն դրսևորվելուն:
- Բացահայտել յուրաքանչյուր սովորողի տաղանդները և հնարավորինս զարգացնել դրանք՝ ուղղորդելով դեպի պետության ամրապնդմանն ու տնտեսության զարգացմանը:

Դպրոցի տեսլականը

1. Դառնալ հասարակության , տնտեսության, պետության զարգացման պահանջներին համապատասխան տեսական ու կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով ու ժամանակակից նորարարական կարողություններով օժտված առաջատար դպրոցներից մեկը Հայաստանի Հանրապետությունում:
2. Սովորողի մոտ ձևավորել այնպիսի կարողունակություններ, որոնք կկիրառեն ողջ կյանքի ընթացքում:

Որակյալ կրթություն՝ սերունդների ձեռքով հզոր ապագա, անպարտ հայրենիք:

Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

<< Վայքի հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական տարրական, հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Հիմնադրվել է –**1961թ**

Դպրոցի գտնվելու վայրը

Մարզ--**Վայոց ձոր**

Համայնք-**Վայք**

Հասցե—**Ալավերդյան 17**

Հեռախոս **282 -2-26-16**

Դպրոցի տիպն ըստ իրականացվող հիմնական ծրագրերի-**ընդհանուր**

Դպրոցի շենքի տիպը **–տիպային**

Հարկայնությունը--**2**

Դպրոցի տիպն ըստ իրակ. կրթական ծրագրերի աստիճանի- **հիմնական**

Աշխատանքային շաբաթ—**հնգօրյա**

Աշխատանքային ռեժիմ**—միահերթ**

Կազմակերպման իրավական ձևը—**պետական**

Ենթակայություն—**մարզային**

Պետական ռեգիստրում գրանցման համարը **44.210.00337**

Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվ **12.01.2003**

Ըստ լիցենզիայի դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ ծրագրերը

Տարրական հանրակրթական

հիմնական հանրակրթական

Համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 16 ապրիլի 2012թ-ի

N 0852 հրամանի տրվել է իրավունք աշակերտների սահմանային թվի վերաբերյալ:

Տարրական հանրակրթական—**350 սահմանային տեղ**

Հիմնական հանրակրթական---**350 սահմանային տեղ**

Նախագծային հզորություն՝ ընդհանուր—**700 սահմանային տեղ**

Այս պահին Վայքի հիմնական դպրոցում սովորում են 716 աշակերտ:

Կրտսեր դպրոց—**345 սովորող**

Միջին դպրոց—**371 սովորող**

Հիմնադրման տարիներից ի վեր փայլել է ոչ միայն տված սաների առաջադիմությամբ և կրթության պատշաճ որակով, այլև նորարարությամբ և արհեստավարժ, գիտակ ու բանիմաց կադրերով: Մարզպետարանի ու համայնքային իշխանությունների կողմից վայելում է պատշաճ վստահություն ու հարգանք: Սովորողների թվով մարզում ամենամեծ հաստատություններից է՝ համալրված արհեստավարժ և իրենց գործի գիտակ մանկավարժներով:

Աշխատակազմ – 69 հոգի

Վարչական -- 4 հոգի

Մանկավարժներ -- 51 հոգի

Ուսուցչի օգնական 5 հոգի

Ուսումնաօժանդակ- 9 հոգի

Դպրոցում աշխատում է լոգոպեդ , հատուկ մանկավարժ և սոց. մանկավարժ, որոնք իրենց աջակցությամբ օժանդակում են դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտներին՝ համագործակցելով ՏՄԱԿ-ի մասնագետների հետ: Ուսուցիչները բոլորն ունեն բարձրագույն կրթություն, անցել են թե՛ իրենց հերթական մասնագիտական ատեստավորումները, թե՛ ՀՊՉ ներդրման վերապատրաստումները: Թվով 4 ուսուցիչ պատրաստվում են մասնակցել ուսուցիչների կամավոր ատեստացիային, 1 ուսուցիչ վերապատրաստող է:

Մանկավարժական խորհուրդ—51 անդամ

Կառավարման խորհուրդ --9 անդամ

Ծնողական Խորհուրդ --26 անդամ

Աշակերտական խորհուրդ 22 անդամ

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցն ունի հաստատված համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան , որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները: Դպրոցն ունի 7 առարկայական մասնախմբեր, որոնց ղեկավարներն իրենց աշխատանքը պլանավորում և կազմում են համաձայն կանոնադրության ու սահմանված կարգի: Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է թափուր տեղի համար հայտարարված մրցույթով՝ կրթության կառավարման մարմնի կողմից սահմանված կարգի համաձայն:

Դպրոցը գործածության մեջ է դնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն.

1.Պետական գրանցման վկայական

2. Դպրոցի կանոնադրություն: Դպրոցի կանոնադրության փոփոխություններն ու լրացումները կատարվել են Վայոց ձորի մարզի մարզպետի կողմից 09 փետրվարի 2021թ-ի N-16_Ա որոշմամբ :

3. Լիցենզիա՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանի և սահմանային տեղերի:

4. Դպրոցի զարգացման ծրագիր:

5. Ներքին կարգապահական կանոններ:

6. Առարկայական ծրագրեր:

7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան:

8. Հաշվետվություն դպրոցի ամենամյա գործունեության մասին:

9. Դպրոցի շենքի սեփականության վկայական:

10. Սովորողների շարժի մատյան:

11. Սովորողների անձնական գործ:

12. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան:

13. Աշխատողների հրամանագիրք:

14. Աշակերտների հրամանագիրք:

15. Աշխատողի անձնական գործ:

16. Հաստիքացուցակ:

17. Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

18. Ուսուցչի բացթողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան:

19. Տարիֆիկացիոն ցուցակ:

20. Դպրոցի մանկավարժական , առարկայական մեթոդմիավորումների , ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյան:

Դպրոցը ղեկավարվում է << ՀՀ սահմանադրությամբ>> , <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով >>

<< Կրթության մասին >>, << Հանրակրթության մասին>>, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

Իրավիճակի վերլուծություն

Ուժեղ և թույլ կողմերը

1. Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն:
2. Հստատության նյութատեխնիկական բազան:
3. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ:
4. Համագործակցությունը համայնքի ,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ:
5. Հաստատության ուսումնական միջավայր:
6. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները:
7. Հաստատության տրամադրած կրթության որակը :
8. Հաստատության կողմից օգտագործվող կրթական տեխնոլոգիաները և նորարարությունները:
9. Հաստատությունում առկա հիմնախնդիրը:

Հաստատության շենքային պայմանները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է, անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:	
Ուսումնական հաստատության գլխավոր մասնաշենքը վերանորոգված է:	Ունի վերանորոգման կարիք,առավելապես 3-րդ մասնաշենքը:
Օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող օբյեկտները հեռու են: Հաստատությունն ունի տեսակավորման համար հատուկ աղբամաններ, որը Վայքի հիմնական դպրոցի աշակերտների նախագծային աշխատանքի արդյունքներից մեկն է:	3-րդ մասնաշենքի տարածքը փոքր-ինչ է մեկուսացած ավտոճանապարհային գոտուց:
Արտակարգ իրավիճակներում ծառայության մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:	Ուսումնական հաստատության շահագործումը մասամբ է համապատասխանում շահագործման անվտանգության նորմերին;
Հանդերձարաններ 2 հատ (աղջիկների,տղաների):	Սանհանգույցները ժամանակակից

	ստանդարտներին համապատասխան չեն:
Շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժին (լայն դռներ,թեքահարթակներ) :	Ենթակա է նորացման (սանդուղքների հարմարեցում)
Ուսումնական հաստատության 2 մասնաշենքերն ապահովված են լոկալ ջեռուցման համակարգով,1 մասնաշենք՝ ԲԱՔՍ –ի համակարգով:	Իրարից գտնվում են 50մ հեռավորության վրա,ունեն Վերանորոգման կարիք:
Դասասենյակներում,միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ և ապահովված է սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ջերմաստիճան:	Որոշ մարտկոցներ ունեն վերանորոգման կարիք:
Ուսումնական հաստատության տանիքը հակահրդեհային է՝ պատված հրակայուն նյութերով:	Տանիքն ունի մասնակի վերանորոգման կարիք:
Հարմարավետ կահավորված դասասենյակներ՝ 26 հատ:	Դասարանում սովորողների թվի և պահանջվող մակերեսների անհամապատասխանություն;
Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով :	Ջրի խողովակաշարերը տեղ-տեղ կոռոզիայի են ենթարկվել,.ենթակա են փոփոխման;
Ուումնական հաստատության բոլոր մասնաշենքերում կան առանձնացված (աղջիկների և տղաների) թվով 7 սանհանգույցներ: Ստեղծված են հարմարություններ ԿԱՊԿՈՒ սովորողների համար:	Սանհանգույցները նթակա են վերանորոգման (հատկապես 3-րդ մասնաշենքում) :
Ուսումնական հաստատությունն ունի գործող գրադարան, շուրջ 3000 գրքերով:	Ունի ժամանակակից նորմերին համապատասխանեցնելու կարիք, ինչպես նաև նյութատեխնիկական միջոցներով ապահովվելու անհրաժեշտություն: Գրադարանը գրքերով վերազինում: Լուսավոր ու ընդարձակ ընթերցասրահի անհրաժեշտություն (Ախ_ի առաջարկու-թյուն՝ ընդգրկելու զարգացման ծրագրի մեջ)
Դպրոցում առկա է բուֆետ- ճաշարան,որը Վայոց ձոր մարզում ցուցադրական է իր սանիտարահիգիենիկ պայմանների համապատասխանությամբ,առողջ ապրելակերպի ու անվտանգ սնվելու նպաստավոր միջավայրով:	
Ուսումնական հաստատությունն ունի 1հ	Լաբորատորիայի տարածքը փոքր է

լաբորատորիա 1 հատ հանդիսությունների անցկացման սրահ՝ կահավորված է գեղեցիկ վարագույրներով, դաշնամուրով և 60 հատ փափուկ աթոռներով; 1 հատ համակարգչային կաբինետ՝ 16հատ համակարգիչներով,1հատ տպիչով և 1հատ տեսահեռարձակման սարքով: 1 հատ շախմատի դասասենյակ:	Միջոցառումների անցկացման սրահի մակերեսը 120մ² Ֆիզիկայի,քիմիայի և կենսաբանության լաբորատոր կաբինետները ենթակա են համապատասխանեցման՝ արդի պահանջ-ներին: Չունի արտադպրոցական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար հագեցած անհրա-ժեշտ գույք ,ուսումնանյու-թական և ուսումնա-դիդակտիկ նյութեր: Շախմատի դասասենյակը և մարզադահլիճը ենթակա են հիմնանորոգման և մասամբ են ապահովված դիդակտիկ և ուսումնական պարագաներով,մարզասարքերով:
	Չունի ապաստարան-նկուղ և դա հանդիսա-նում է առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող խնդիր:
1 Բուժկետ, որտեղ տրամադրվում է առաջին բուժօգնություն:	Բուժկետի վերանորոգում ;
Մարզահրապարակ;	Մարզահրապարակի բարեկարգում:
	Բացօթյա խաղահրապարակի կարիք:
Աշակերտների մեծամասնությունն ունի գրասայլիկ;	
<<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>> առարկան դասավանդելու համար կահավորված դասասենյակ՝ զենքի պահպանման ճաղավանդակներով զինանոցով:	Հրաձգարանի ստեղծում (դրամաշնորհային ծրագրով) :
Դպրոցից ոստիկանություն հեռավորությունը՝ 100մ;	
Տարածքը հեռու է մայրուղուց 200մ;	
Դպրոցից դպրոց հեռավորությունը 700մ:	
	<< Տեխնոլոգիա>> առարկայի համար արհես-տանոց ՝ համապատասխան սարքավորում-ներով:
Առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր (I մասնաշենք -3h) (II մասնաշենք -1h) :	II մասնաշենքի ելքի դուռը նեղ է, ինչը աղետ-ների,տագնապի և տարհանման ժամանակ խնդիր է առաջացնում, որտեղից պետք է տարհանվեն 350-400 հոգի:Կարիք ունի 2-րդ պահուստային ելքի բացման:

ԱՅԸ ԱՆՑՅԱԼ Է
ՀԱՅԸ ՆԵՐԿԱ Է
ՀԱՅԸ ԳԱԼԻՔ Է

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՄՈԼՈՐԱԿ

Նյութատեխնիկական բազա

Ուժեղ	Թույլ
Դպրոցն ունի հեռախոսային ներքին ցանց:	
Ինտերետային ներքին ցանց Wi-Fi:	Ոչ բոլոր դասասենյակներն են ապահովված:
Բազմաֆունկցիոնալ սարք 7 հատ	Կան փոփոխման ենթակա սարքեր:
Անխափան սնուցման սարք (UPS) 6 h	
Տեսահեռարձակման սարք -1 հատ:	Արտատպիչների, մուտքագրիչների բացակայությունը դժվարացնում է նոր տեխնոլոգիաներով դասավանդման :
Էլեկտրոնային գրատախտակ -1 հատ	
Երաժշտական կենտրոն -1 հատ:	
Համակարգիչ՝ 20 հատ:	Նոր համակարգիչների ձեռքբերում:
Տեսախցիկներ՝ 16 հատ:	
Նվագարկիչներ ՝ 2 հատ:	
Բարձրախոս ՝ 2 հատ:	
Հեռուստացույց ՝ 1 հատ:	
Դաշնամուր՝ 1 հատ:	
Նոութբուք ՝ 1 հատ:	ևս 1 նոութբուքի անհրաժեշտություն:
Միքշեռ՝1 հատ:	
Տպիչ՝ 4 հատ :	Որոշները ենթակա են նորացման:
Ճաշարանն ունի մշտական ջրամատակա-րարում,սառնարաններ, գազօջախներ ,ջրատաքացուցիչ, նոր սպասք, ամբողջովին նոր սեղաններ- 24 h, աթոռներ-144 h, լվացարաններ -2h, պահարաններ 4 h, որոնք տրամադրվել է դպրոցին նվիրատվության կարգով կրտսեր դպրոցի սովորողներին տաք սնունդով ապահովելու համար;	Ճաշարանի և կրտսեր դպրոցի միջև հեռավորությունը;
ՆԶՊ կաբինետ զինանոցով՝ կցված զենքով:	Ենթակա է վերանորոգման :
Գրադարան գրադարակներով՝ հագեցած գրքերով;	Գրադարանը հարստացնել ժամանակակից գրականությամբ,նյութատեխնիկական բազայով (ԱԽ –ի առաջարկ և պատրաստակամություն) :

Հանդիսությունների աթոռներ 60 h	Հանդիսատեսը շատ է լինում աթոռները ,քիչ են:
Գրասենյակային աթոռներ 15 h	
Դպրոցում տեղադրված է տագնապի ժամանակ ազդարարվող շչակ:	

Կառավարման և խորհրդակցական մարմիններ



Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀՀ Կառավարության 2002թ-ի հուլիսի 25-ի N 1392-ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության 27-րդ կետի համաձայն ՝ դպրոցի կառավարման մարմիններն են

1.Հիմնադիրը

2.ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, տարածքային Կառավարման մարմինը (լիազորված մարմինը)
3.Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը
4.Գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը:
Հաստատությունում իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝

- Մանկավարժական խորհուրդ
- Առարկայական մեթոդական միավորումներ
- Ծնողական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ

Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական մարմիններ հոգաբարձուների, շրջանավարտների մարմիններ

Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմվել է դպրոցի կողմից՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը և կարգը:

Խորհուրդներն ունեն իրավական կանոնավարություն, ազատ են իրենց գործողություններում՝ պահպանում են իրենց իրավունքներն ու պարտականությունները:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
1.Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմին,որն իր լիազորությունների սահմանում իրականացնում է: ա. Տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն:	Խորհրդի՝ տնօրենի զարգացման ծրագրի վերահսկողության նկատմամբ պասիվ գործունեություն:
բ. Բյուջեի նախագծի քննարկում	Հետևողականությունը թույլ է

մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների հետ:	ֆինանսական ծախսերի առումով :
	Խորհուրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով պետք է իրականացնի վերահսկողություն բյուջեի կազմման, քննարկման և կատարման գործընթացի նկատմամբ:
գ. Հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի հաստատումը:	
դ. Քննարկում է դպրոցական խորհրդի տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն իր դիրքորոշման հետ միասին ներկայացնում է լիազոր մարմնին;	Գործունեությունը՝ պասիվ, ոչ մասնակցային:
ե. Տնօրենի ներկայացմամբ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը , բյուջետային ֆինանսավորման: հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները:	Վերահսկողության մեխանիզմների մշակում:
զ. Ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին, խնդիրներին համապատասխան առաջարկները ներկայացնում է լիազոր մարմնին:	Խորհրդակցական մարմինների անդամների միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցության պակաս:
է. Իրականացնում է վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարողականում՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:	
	Չունի հոգաբարձուների խորհուրդ: Կառավարման խորհրդի առաջարկով հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի ձևավորում:
ը. Դպրոցի խորհուրդն իր խորհրդատվությամբ՝ դպրոցի ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով աջակցում է տնօրենին իր կողմից առաջարկած նպատակների իրականացման հարցում:	

Խորհրդակցական մարմիններից են Մանկավարժական խորհուրդ՝ թվով 26 հոգի, պաշտաճ կերպով կատարում է կանոնադրությամբ վերապահված իր գործառույթները.	
նիստերը գումարվում են բոլոր անդամների մասնակցությամբ	Մանկավարժական խորհրդի աշխատանքներում շարունակել կիրառել մասնակցային քննարկումները :
. Քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները,անում առաջարկներ;	Ակտիվության պակաս:
. Անդրադառնում է ընթացիկ հարցերին:	Ոչ բոլորը
. Կրում կոլեկտիվ պատասխանատվություն ընդունված որոշումների համար:	Ոչ միշտ
Ծնողական խորհուրդը կազմված է 26 հոգուց, որն աջակցում է ուսումնադաստիարակչական աշխա-տանքներին: Պասիվ ծնողների հետ տանում է աշխատանքներ սովորողների հաճախումների, ուշացումների ու վարքային շտկումների վերաբերյալ:	Կապը դպրոցի հետ պասիվ է. ոչ մասնակցային: Պասիվ գործունեություն ու համագործակցություն, նախաձեռնու-թյուններով աչքի չընկնելը,համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ արդյունավետ չհամագործակցելը: Ծնողական խորհրդի կողմից ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրման գործընթացին դրսևորած անտարբերությունը: <<Դասը վարում է ծնողը>> մասնագիտա-կան փորձի փոխանակման պակաս:
Աշակերտական խորհուրդ՝թվով 22 հոգի (6-9-րդ դասարանների 2-ական աշակերտ) որոնք տիրապետում են բավարար գիտելիքներ իրենց գործառույթների շրջանակներում:	Կապն այլ ԱԽ_ ի հետ:
Գումարում են նիստեր, իրականացնում քննար-կումներ,ծրագրեր,կայացնում որոշումներ, անհրաժեշտության դեպքում մասնակցում մանկավարժական խորհրդի նիստերին՝ հանդես գալով առաջարկություններով, կազմակերպում համադպրոցական միջոցառումներ: Գործուն մասնակցություն համայնքային ու մարզային միջոցառումներին, ունեն աշխատանքային պլաններ և արձանագրություններ:	Ոչ բոլոր հանձնախմբերի մասնակցությունն է ակտիվ:

Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում;
- Դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում;
- Կրթության պետական կառավարման լիազոր մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում;

Հաստատության կառավարման մարմնի՝ խորհրդի և տնօրենի համագործակցությունն իրականացվում է վերջիններիս օրենքով և հաստատության կանոնադրությամբ վերապահված հետևյալ լիազորությունների իրականացման շրջանակներում:

Հաստատության կառավարման մարմինը՝ խորհուրդը

1.Տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է վերահսկողություն:

2.Հաստատում է դպրոցի կազմակերպման կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:

3.Կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ դպրոցի լրացուցիչ ֆինանսական միջոցների հաշվին:

4.Տնօրենի ներկայացմամբ՝ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, տալիս է հավանություն և ներկայացնում համապատասխան լիազորված մարմին:

5.Քննարկում է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները:

6.Որոշում է մասնակցել արտաքին գնահատմանը, քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

7.Վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը:

8.Հիմնադրի սահմանած կարգով սահմանում է դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները:

9.Լսում է գույքի օտարման և կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները և տալիս հավանություն:

10.Լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան:

11. Քննարկում է դպրոցի ԾԽ՝ տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն, իր դիրքորոշման հետ միասին, ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին:

12.Իրականացնում է օրենքով հիմնադրի կողմից իրեն վերապահված և կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Հաստատության տնօրենը

1.Խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը՝ դրանում առանձին տողով ներկայացնելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները: Կազմում է տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն ու ամենամյա ծախսերի նախահաշիվը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազորված մարմին:

2.Խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը:

3.Աջակցում է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին:

4.Մասնակցում է խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.Նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:

6. Օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի և խորհրդի որոշումների, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Դպրոցի տնօրենը ժամանակին միջոցներ է ձեռնարկում խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Այդ նպատակով

Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպվում են սեմինարներ՝ դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար:

Առարկայական մեթոդմիավորումների նախագահների համար կազմակերպվում են սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով:

Ձեռնարկվում են միջոցներ առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը զարգացնելու ուղղությամբ՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

Դպրոցի տնօրենը համագործակցում է և կառավարման, և խորհրդակցական մարմինների հետ: Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Կառավարման խորհուրդը գործում է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում՝ պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություն-ներին:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, խորհրդի նիստերը գումարվում են հնարավորինս լայն մասնակցությամբ: Խորհուրդն անհրաժեշտաբար քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Աշակերտական խորհուրդը հնավորինս ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:ԱԽ-ը խորհուրդը հանդես է գալիս առաջարկություններով, որոնք վերաբերվում են ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին: Կազմակերպում է տարբեր հանդիպումներ, տարաբնույթ ճանաչողական էքսկուրսիաներ, որոնք իրականացվում են մեծ մասամբ նախարարության կողմից տրամադրած աբոնենտային տոմսերով: Կարևորելով աշակերտական ինքնակազմակերպումն ու ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, խնդիրներին տալիս հնարավոր լուծումներ:Կարևորվում է ԱԽ-ի կողմից հարցերի խորը վերլուծությունը: ԱԽ-ի նախագահն անհրաժեշտության դեպքում մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության պատշաճորեն գումարում է նիստերը հստակ օրակարգով վարում աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյանները:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակ-չական աշխատանքներում: Ձայնի իրավունքով ըստ անհրաժեշտության մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պատշաճորեն գումարում է նիստերը հստակ օրակարգերով վարում ԾԽ-ի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական խորհրդի միջոցով կազմակերպում է ծնողական էքսկուրսիաներ, այցելություններ, թանգարանային վայրեր, իրականացնում այլ միջոցառումներ:

Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն

Նպատակ-Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

Խնդիրներ-Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ներքոգրյալ ուղղություններով

Ռիսկեր-Խնդրահարույց և պրոբլեմային իրավիճակների ոչ մասնակցային մոտեցումը դպրոցի կառավարման գործընթացում: Դպրոցի գործունեության իրականացման թույլ

վերահսկողություն: Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ:

Ակնկալվող արդյունքներ-կառավարման խորհրդի և տնօրենի ակտիվ համագործակցություն:

Ռիսկեր մեղմող գործողություններ-Կատարել կարգին համապատասխան դպրոցավարություն:

Նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողություններ և միջոցառումներ

- Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, մրցույթներին
- ԼՄ դպրոցի զարգացման վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:
- Դպրոցի խորհրդի քննարկմանը ներկայացնել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, դրանում առանձին տողով ներկայացնել մանկավարժահոգեբանական ծառայությունները, երկարօրյա դասընթացների կազմակերպումը:
- Ձեռնարկել միջոցներ լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար:
- Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:
- Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ կապը:
- Կազմել դպրոցի տարիֆիկացիան, հաստիքացուցակն ու հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնել լիազորված մարմին:
- Խորհրդի հավանությանը ներկայացնել դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը:
- Մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով :
- Նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակել և խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:

Պատասխանատու- Տնօրեն

Ժամանակացույց- Ծրագրի իրականացման ընթացքում 2023-2028թթ

Ռեսուրսներ- Կառավարման հմտություններ

Ֆինանսական միջոցներ- Չի պահանջվում միջոցներ

նպատակ	Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով,մասնագիտական և դասավանդման որակների արդիականացման և բարելավման միջոցով ուսուցման որակի բարձրացում:
Խնդիր	Մանկավարժական խորհրդի աշխատանքներում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները:
Ռիսկեր	Մանկավարժների նախաձեռնողականության պակաս:
Ռիսկերի մեղմում	Նպաստել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստում-ներին,ատեստացիաներին,ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներ տանելուն:
Ակնկալվող արդյունքներ	Համակազմի շարունակական համալրում փորձառու,երիտասարդ մասնագետներով,մասնագիտական և դասվանդման որակների արդիականացում և բարելավում:

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Առաջավոր փորձի փոխանակման հիման վրա ակտիվացնել մանկավարժների աշխատանքային գործունեությունը:
- Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի կայացրած որոշումները:
- Կիրառել ուսուցիչների աշխատանքի վերահսկման ,խրախուսման և գնահատման նոր գործիքներ:
- Մ/Խ նիստերին ախակերտներին վերաբերող խնդիրները քննարկելիս մասնակից դարձնել ԱԽ-ի նախագահին:

Պատասխանատուներ - տնօրեն
ժամանակացույց --- Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում
Անհրաժեշտ ռեսուրսներ --- Խորհրդակցական մարմինների վերաբերյալ իրավական ակտեր և կարգեր

Առարկայական մեթոդմիավորում

նպատակ	Նույն մտածողության մասնագետների նոր մտահղացումների ստեղծում
խնդիրներ	Կազմակերպել մասնագիտական ,մանկավարժական ,մեթոդական կատարելագործման աշխատանքներ
Ռիսկեր	Ուսուցիչների ոգևորության նվազում, միմյանց նկատմամաբ միջանձնային փոխհարաբերություններ
Ռիսկերի մեղմում	Մանկավարժահոգեբանական ,մեթոդական զեկուցումների հաղորդում նիստերին:
Ակնկալվող արդյունքներ	Կրթության որակ ապահովող ուսուցիչներ

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի , ուսումնական պլանների նախագծերի , նոր փորձարկվող դասագրքերի քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տրվող երաշխավորու-թյունների մասին քննարկումներին ապահովել երիտասարդ մանկավարժների նոր ուժերը:
- Նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը:
- Ուսումնասիրել , ընդհանրացնե լմանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնել Մ/Մ գործնական աշխատանքներում:
- Կազմակերպել փորձարկվող գրքերի փորձաքննություն:
- Որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչների նախապատրաստել ատեստավորման:
- Կազմակերպել մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:
- Մանկավարժական նորագույն նվաճումներին հաղորդակից դարձնել մանկավարժներին:

Պատասխանատու -տնօրեն

Ժամանակացույց---Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում

Անհրաժեշտ արդյունքներ—Վերահսկողություն բոլոր օղակնե-րում,արձանագրումներ,կազմակերպվածություն և աշխատանքների պլանավորում:
Ֆինանսական միջոցներ – Պետական բյուջե

Ծնողական խորհուրդ

Նպատակ	Դպրոց-ծնող անմիջական կապի ամրապնդում
խնդիրներ	Նպաստել ծնողներին՝ իրենց երեխայի մասին առավել ինֆորմացված լինելուն
Ռիսկեր	~~Ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվություն~~
Ռիսկերի մեղմում	Միջոցառումների,սեմինարների կազմակերպում
Ակնկալվող արդյունքներ	~~Դպրոցի առօրյայով ապրող և հոգսերով մտահոգված ծնողական միջավայր~~

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում:
- Ոգևորել ծնողների մասնակցությունը՝ սովորողների ուսուցման,դաստիարակության գործընթացին,ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների:
- Աջակցություն ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում:
- Ծնողական խորհրդի կապի ամրապնդում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:
- Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ:

Պատասխանատուներ ------ տնօրեն
Ժամանակացույց ---------- Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում
Անհրաժեշտ ռեսուրսներ Դպրոցի համար սրտացավ մարդիկ,նախաձեռնողներ
Ֆինանսական միջոցներ ---- Պետական բյուջե

Աշակերտական խորհուրդ

Նպատակ	Սովորողների մոտիվացիայիխթանում, ուսումնառության որակի բարելավում,արժեհամակարգի ձևավորում,աշակերտների ինքնավստահության խթանում,մասնագիտական կողմնորաշմանն ուղղված աշխատանքների կազմակերպում:
Խնդիրներ	Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով:
Ռիսկեր	Աշակերտների ինքնակատարելագործման շահագրգռվածության նվազում:
Ռիսկերի մեղմում	<u>ՏՀՏ ծրագրերի ներդրում աշխատանքային գործունեության մեջ:</u>

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Աջակցել ԱԽ-ին բարձրացնել դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները:
- Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ աշակերտի ինքնավարության միջոցով:
- Աշակերտական խորհրդի գործունեության հիմքում կարևորելով սովորողի վարքականոնները և վարվելակերպի ձևավորումը, շարունակել հասարակական ակտիվ անհատի կրթման, սեփական կարծիքի ազատ արտահայտման ուղղությամբ տարվող աշխատանքները:
  Մեծացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ առավել նրբանկատություն, հարգանք ու հանդուրժողականություն:

Պատասխանատուներ--- Տնօրեն, տնօրենություն
Ժամանակացույց-- ---- Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում
Անհրաժեշտ ռեսուրսներ – Քաղաքացիական դաստիարակության բարձր դրսևորում
Ֆինանսական միջոցներ---Պետբյուջե

Համագործակցությունը համայքի կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ռազմահայրենասիրական միջոցառման ժամանակ Մարզպետ պարոն Ա. Գրիգորյանի խոնարհումը զոհված փոխգնդապետի հիշատակին

Նախագծային աշխատանք իրականացնելիս հանդիպում համայնքապետ

պարոն Մ. Մաթևոսյանի հետ

Ուժեղ	Թույլ
1.Կրթության կառավարման մարմինների հետ: . ԿԳՄՄՆ . Վայոց ձորի մարզպետարան:	
2 . Դպրոցը համագործակցում է Վայքի համայքապետարանի հետ՝ ունենալով գործուն մասնակցություն համայքի հիմնախնդիրների լուծմանը՝ որպես կամավորներ:	
3 . ԿԶՆԱԿ-ի հետ իրականացնում է . Նոր ՀՊՉ-ների ներդրման վերապատրաստումներ:	
4 <<Երիտասարդները հանուն կլիմայի բարեփոխման>> ծրագրի նախագծային աաշխատանք: Իրականացվել է իմ կողմից՝ արժանանալով խրախուսանքի,ինչը հնարավորություն տվեց դպրոցին մասնակցելու UNICEF-ի խոշոր դրամաշնորհային ծրագրին:	քիչ թվով սովորողների ընդգրկվածություն:
5.Խորացված ռուսերենի ուսուցման կազմակերպման շրջանակում ԿԳՄՄՆ նախարարության Մոսկովյան և Մշակութագործարարական կենտրոն << Дом Москвы>> -ի հետ:	Ծրագրերը բավականին բարդ են , քիչ աշակերտների մոտ յուրացվող:
6.Համագործակցությունը մի շարք ՀԿ-ների հետսովորողի սոցիալիզացիային նպաստելու, քննադատական մտածողության ձևավորման և կարուղունակությունների բարձրացման նպատակով;	Աշակերտական համակազմը պասիվ է, գործունեությունը՝ քիչ մասնակցային:
7 .Վայք-Ինֆոտան հետ սովորողներն իրականացնում են՝ . սոցիալական նախագծեր . հասարակական կյանքին ուղղված սոցիալական ծառայություններ:	Քիչ են ակտիվիստները:
8 .Մարզպետի հրամանով որպես <<Քույր>> դպրոց՝ Խաչիկի դպրոցն է: Իրականացվել են համատեղ միջոցառումներ, փոխադարձ այցելություններ:	Մեծացնել համագործակցությունը :

9.Համագործակցում է <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի հետ փորձի փոխանակման նպատակով:	Համագործակցային կապերը թույլ են Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների հետ ուսուցման նորարարություններին ծանոթանալու և կիրառելու համար:
10 .Լայնորեն համագործակցում է <<Այբ>> դպրոցի հետ, իրականացնում փոխադարձ այցելություններ կրթական և մշակութային նպատակներով: 11 . UNICEF-ի և <<Ծնողի դպրոց>> ՀԿ-ի հետ հետ շուրջ 3 տարի իրականացվում է ծնողավարման ուսուցողական դասընթացներ:	Դիլիջանի կենտրոնական դպրոց Շիրակացու ճեմարան Գլոբալ Բրիջ դպրոց Հնարավորության դեպքում կազմակերպել հանդիպումներ, փոխադարձ այցելություններ փորձի փոխանակման և կրթական ու մշակութային ծրագրերի շրջանակում:
12 Ճանաչողական էքսկուրսիաներ Եղեգնաձորի երկրագիտական թանգարան՝ իրականացնելով սոցիալական նախագծեր:	Ոչ բոլոր դասարաններն են այցելում և ոչ հաճախակի:
. պատմամշակութային ազգային համագործակցություն . Այցելություններն իրականացվում են աբոնեմենտային համակարգով	
13. ԴՏՇՀ –ի հետ իրականացվում են դասագրքերի գնահատում,այլընտրանքային հեղինակային գրքերի ուսումնասիրում:	
14. Համագործակցում է ԱԻՆ-ի աշխատակիցների հետ՝ իրականացնելով տեսական –գործնական պարապմունքներ: Իրականացվել են ուսումնական տարհանումներ՝ շչակի գործարկմամբ:	Դպրոցում ապաստարանի բացակայություն:
15. Դպրոցը մշտապես համագործակցում է Կարմիր Խաչի միջազգային կազմակերպության հետ՝ ներքոգրյալ թեմաներով: Կարմիր Խաչի մարզային ներկայացուցչությունը մշտապես աջակցել է Արցախից եկած երեխաներին(Վայքի հիմն.դպրոցում սովորող) բարոյահոգեբանական զրույցներով, նվերներով, գրենական պիտույքներով , պայուսակով: Դպրոցի հետ համատեղ անցկացվել է նկարչության մրցույթ:	
. Պատերազմական իրավիճակներում անխուճապ	

դրսևորմանն ողղված սեմինար պարապմունքներ հետևյալ թեմաներով . Առաջին բուժօգնություն . Ականների վնասազերծում:	
16. Վայք համայնքի և Վայոց ձորի մարզային գրադարանի հետ համագործակցությունը սովորողների մոտ ձևավորում է կարդալու, գիրք սիրելու,ինչպես նաև լեզվական հաղորդակցության ձևավորու:	Կարդալու մոտիվացիան քիչ է:
17 ՄՄԿ (Վայքի մանկական ստեղծագործական կենտրոն)-ի հետ.համագործակցելով ցուցադրվում են տիկնիկային և մանկական թատրոններ:	
18.Դպրոցը համագործակցում է ՀՈԱԿ-ների հետ,Կազմակերպում այցելություններ մանկապարտեզներ՝ ծանոթանալու նախադպրոցական տարիքի երեխաների նախասիրություններին: . Ծանոթացնում հետագա ուսումնառությունն իրականացվող հաստատության շենքային պայմաններին:	
19. Դպրոցն իրականացնում է Համատեղ գործունեություն Սպորտ դպրոցի ու մարզային ենթակայության այլ դպրոցների, մարզպետարանի ԿԳՄՍ վարչության համապատասխան ենթակառույցների հետ՝ իրականացնելով սպորտային միջոցառումներ , սպորտլանդիաներ:	
՝Ֆուտբոլի , վոլեյբոլի և բասկետբոլի մրցաշարեր, շախմատի մարզային 16-րդ մրցաշարում I տեղ, իսկ հանրապետականում՝ II տեղ:	
20 Թումո կենտրոն հաճախող երեխաներն ունեն . կրթական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու կարողունակություններ:	
21. Դպրոցը համագործակցում է Վայքի բուժմիավորման հետ ՝ իրականացնելով . տեսողական խնդիրներով սովորողների կանխարգելիչ ստուգումներ: . Նախազորակոչային տարիքի տղաներին պատվաստման գործընթացի համակարգում:	
22. Համագործակցում է Վայքի ոստիկանության հետ , իրականացնում հանդիպումներ անչափահասների գծով տեսուչի հետ,	Թափանցիկության պակաս, խնդիրների վերհանման խուսափում: Ծնող-ոստիկան պասիվ կապ:

կազմակերպում քննարկումներ, < < Բուլինգ >> թեմայի բացատրման, եթե կան՝ բացահայտման ու կանխարգելման,հանրային քննարկման դնելու նպատակով: . Իրականացնում զրույցներ ծխախոտի, ալկոհոլի, թմրամոլության օգտագործման դեպքերը կանխելու համար:	
23. UNICEF – ի և <<Այբ >> դպրոցի հետ իրականացվել է. << Երիտասարդները հանուն կլիմայի բարեփոխման>> թեմայով նախագծային աշխատանք, որտեղ մեծ է եղել նաև համայնքի դերը՝ տրամադրելով պլաստիկե շշերի համար տեսակավորման աղբամաններ , նախագծային աշխատանքի հավանությունից հետո՝ հանրային ներկայացման ֆլեշմոբ:	
24. Համագործակցությունը ՏՄԱԿ-ի հետ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքների պլանավորման ու իրականացման համար:	ԿԱՊԿՈՒ երեխաների ոչ բոլոր ծնողների դրական վերաբերմունքը ՏՄԱԿ-ի գործունեության նկատմամբ, ինչը բազմաձավալ աշխատանք է՝արդյունքը փոքր քայլերով,բայց՝ նկատելի:
25. Համագործակցությունը Վայքի զորամասի հետ . ռազմահայրենասիրական միջոցառումներ: .Կրակային վարժանքներ ՆԶՊ առարկայի շրջանակում:	Համագործակցությունը՝ պասիվ :
26. Ուսուցիչների մասնակցությունը կրթական հարթակներում՝ . EDU – ARMENIA . Պարադիգմա . Իմ դպրոց .Քան ակադեմիա .Կրթադիտակ .ԴՇՏՀ	Ոչ բոլոր ուսուցիչներն են հմտորեն տիրապետում: Ուսուցիչների պասիվ մասնակցայնություն:
27.ՆՈՒ իրականացնելու նպատակով վերապատրաստում ԿԶՆԱԿ-ի հետ , որի արդյունքում իրականացվել է << Հայ երգը ֆիլմում>> նախագծային աշխատանքը	Ուսուցիչների ՆՈՒ իրականացնելու հմտությունների պակաս:
28. Համագործակցությունը <<Մարդու	Պասիվ է համագործակցությունը:

իրավունքների պաշտպան >> գրասենյակի ներկայացուցիչների հետ:	
29. ԳԹԿ-ի հետ իրականացնում արտաքին գնահատում և արդյունքների վերլուծություն, համեմատում ներքին գնահատման հետ :	Արտաքին և ներքին գնահատման տարբերություն:
30. Իրականացվում է դպրոց-ընտանիք փոխ համագործակցությունն ամրապնդող միջոցառումներ:	Հաճախակի հանդիպող պասիվ ու անտարբեր ծնողներ:
31. Համագործակցում է << Արվեստի դպրոցի >> երաժշտական և նկարչական բաժինների հետ՝ սովորողների մոտ ձևավորելով մշակութային արժեքներ:	
32՝. << Մշակույթի տուն >> ՀՈԱԿ-ի հետ համատեղ նախագծում և իրականացնում բարձր մակարդակի միջոցառումներ:	Քիչ սովորողների ընդգրկվացություն,մոտիվացիայի պակաս:
33. Կազմակերպվում են հանդիպումներ, լսումներ տեղական ինքնակառավարման աշխատակազմի և հասարակության ակտիվ խմբերի հետ,որոնք սովորեցնում են՝ ինչպես գրել դրամաշնորհային ծրագրեր:	Պասիվ և ոչ մասնակցային գործունեություն :Հետաքրքրված ուսուցիչներ թիվը մեծ չէ:

Ուսումնական միջավայր

Ամենակարևոր երևույթը դպրոցում,ամենաուսուցանվող առարկան , ամենալավ կենդանի օրինակը.. .այս ամենն ամբողջանում է ուսուցչի մեջ:

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված գործողությունների ,համակարգված գործընթացների և սոցիալական փախազդեցության համակարգ է, որը շահառուին տալիս է ինքնահաստատման, ինքնադրսևորման ,վարքականոնների դրսևորման հնարավորություն, ինչպես նաև սովորողին տրամադրում ուսուցման անձնական մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ: Շատ կարևոր է ունենալ ուսումնական բարենպաստ և ուսումնառությանը նպաստող մոտիվացիոն միջավայր: Դպրոցում չպետք է լինեն սովորողի նկատմամբ բռնության կիրառման դեպքեր: Ուսումնական միջավայրում երեխան պետք է լինի անվտանգ, իրեն զգա պաշտպանված և տիրի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, որն էլ հնարավորություն կտա ծնողներին իրենց երեխաների կրթության ու դաստիարակման

առաքելությունը վստահի << Վայքի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ին: Այդ վստահությանը հասնելու համար կարևորվում է թիմային աշխատանքը:

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է՝ մշտական հոգածություն ուսուցիչների, դասղեկի ,բուժքրոջ և տնօրենության կողմից:

ԿՅԱՆՔՍ ԿՅԱՆՔԻԴ ՀԱՄԱՐ

ԱՂԲԻ ԱՅՐՄԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ...

Ուժեղ	Թույլ
1 .Համակարգչային դասասենյակ,որտեղ իրականացվում են էլեկտրոնային և վիրտուալ դասեր:	Համակարգիչներով վերազինումը կնպաստի նոր տեխնոլոգիաներով ,հաջողված դասերի արդյունավետության բարձրացմանը:
2. Դպրոցն ունի շախմատի դասասենյակ,որտեղ կազմակերպվում են շախմատի համայնքային և մարզային առաջնությունները:Դպրոցում շախմատ դասավանդում է կարգային ուսուցիչ,որի արդյունքում դպրոցի սաները գրանցում են հաղթանակներ ոչ միայն մարզում,նաև հանրապետության մրցաշարերում:	
3. Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ սովորողների համար աջակցության սենյակ:	Նյութատեխնիկական բազայի պակաս ,քիչ դիդակտիկա:
4. Աշակերտների մասնակցությունը տարբեր առարկայական օլիմպիադաների:	Մարզային և հանրապետական փուլերում առաջնային տեղեր քիչ են գրավում:
5 Գրադարան:	Սովորողների քիչ մասն են օգտվում դպրոցական գրադարանից:
Մ 6. Մենթալ թվաբանության հանրապետական մրցույթում դպրոցի 6-րդ դասարանի սովորողը զբաղեցրել է I տեղ	
7. Գեղարվեստական,գրական- երաժշտական ցերեկույթները ձևավորում են մշակութային արժեհամակարգ:	
5. Դպրոցն ունի << Փառքի անկյուն>> նվիրված մեր հերոսների հիշատակին, որտեղ անցկացվում են հայրենասիրական դասեր և միջոցառումներ:	Հայրենասիրական դաստիարակությանն ուղղված դասեր ոչ բոլոր ուսուցիչների մոտ:
9. Խրախուսվում են ուսման մեջ բարձր առաջադիմությամբ սովորողները,այն է .պատվոգրեր, շնորհակալագրեր,գովասանագրեր,գրենական պիտույքներ: Այսուհետ՝ յուրաք. ուստարի 2 գերազանց	

սովորող(վիճակահանության սկզբունքով) կարժանանա <<Արա Շահբազյան >> կրթաթոշակի՝ ի պատիվ Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացած Արա Շահբազյանի պատվին՝ Հիմք՝ դպրոցի և նրա ընտանիքի հուշագիրը:	
	STEM կրթության բացակայություն:
	Լրացուցիչ ծրագրերի իրականացման բացակայություն:
10. Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները ձևավորված են վստահելի պահանջկոտությամբ և սիրով դրսևորվող կապվածության վրա:	

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ

Դժվար է պատկերացնել մարդկային որևէ դրական հատկություն, որն ավելորդ կլիներ ուսուցչին բնորոշ որակների ցանկում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր մասնագիտություն ունի կոնկրետ պահանջներ: Բնականաբար ուսուցչի մասնագիտությունը բացառություն չէ :

Ուժեղ	Թույլ
1 Սկսնակ ուսուցիչներին տրվում են մեթոդական օգնություններ՝ դասի ճիշտ պլանավորման և արդյունավետությանն ուղղված, ինչպես նաև նոր տեխնոլոգիաներով դասավանդման հմտություններին:	Մոտիվացիայի պակաս,որը կլրացվի դպրոցի արհեստավարժ ու վաստակաշատ ուսուցիչների սրտացավությամբ:
2. Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ներդրում, տեղայնացում պրակտիկ գործունեություն:	Ոչ բոլոր ուսուցիչներն են հետաքրքրված:
3. Ամեն ուստարի ուուցիչների 20% -ը մասնակցում է պարտադիր վերապատրաստման:	Վերապատրաստող կազմակերպությունները ոչ միշտ են ճիշտ ընտրվում:
4. Վերապատրաստումներով և ինքնակրթությամբ դպրոցի 4 ուսուցիչներ պատրաստվում են կամավոր ատեստացիային :	Մեծ թիվ չեն կազմում ցանկացող ուսուցիչները:Վախի անինքնավստահության զգացում:
5. Մասնագիտական ,մեթոդական,խորհրդակցությունների և մանկավարժական սեմինարների մասնակցություն :	Համագործակցությունը պակաս է այլ դպրոցի մանկավարժների և մեթոդմիավորումների միջև:
6. Էլեկտրոնային մատյանների վարման կարգի ծանոթացում և հմտացման աշխատանքներ սկսնակ ուսուցիչների համար:	
7՝ Նորագույն նվաճումներն ուսուցչին հասանելի դարձնելու գործիքակազմերի մշակում:	
8. Փոխադարձ դասալսումներ:	Պասիվ մասնակցային գործունեություն:
Մեթոդմիավորման նիստերում մանկավարժական զեկույցներ, ընթերցումներ:	Քիչ ուսուցիչների կողմից է կատարվում:

Նախագծային ուսուցման կազմակերպում՝առավել հմուտ և նախագծած ուսուցիչների հետ համագործակցությամբ:	
11՝Առարկայական շաբաթներ :	Բոլոր առարկաներից չեն սահմանվում առարկայական շաբաթները:
12. Ուսուցիչների մասնակցությունը կրթական այլ ծրագրերում:	Ուսուցիչների որոշ մասն ակտիվ չի:
13. Տնօրենության և մարզպետարանի կողմից լավագույն ուսուցիչները արժանանում են խրախուսանքի :	
14. Մանկավարժների համաժողովներում ուսուցիչների մասնակցություն:	Պասիվություն:
15. Առնվազն հինգ տարվա ստաժ ունեցող ուսուցիչների նախապատրաստում ատեստացիային:	
2-րդ. 5-րդ և 7-րդ դասարանների չափորոշչահեն գիտելիքներ փոխանցելու հմտությունների ձևավորում:	Հմտությունների պակաս որոշ ուսուցիչների մոտ:

Կրթության որակ

Երեխային տվեք հնարավորություն և նա ինքը կբացահայտի իր ձիրքերը ,եթե մեզ հաջողվի կրթական ուսումնական միջավայրը դարձնել գրավիչ՝ արդյունքը մեզ սպասեցնել չի տա...

Կրթության որակ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք , որը գնահատվում է (բացառությամբ որոշ դասարանների) հաշվի առնելով ուսուցման ծրագրային բովանդակությունը,կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների, ինչպես նաև կրթության որակի գնահատման չափանիշներին՝ ըստ ուղղությունների:Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրության մեջ: Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

Սովորողի գիտակցական մակարդակում այս գաղափարները պիտի դառնան ըմբռնելի.

- Սովորել իմանալու համար (ամենօրյա գիտելիքների զարգացում)
- Սովորել անելու համար (գիտելիքների պրակտիկ իրագործում)
- Սովորել համատեղ ապրելու համար (կենսակերպի կառուցում,որտեղ չկա խտրականություն և կան զարգացման հավասար հնարավորություններ)
- Սովորել լինելու համար (հմտություններ,որոնք կտան անհատին զարգացնելու իր ողջ հնարավորությունները)

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում պետք է նշել

Կրթության չափանիշներով և բարելավված ծրագրերով,մատչելիությամբ սովորողներին տալ համապատասխան չափորոշչահեն գիտելիքներ:
Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում,ապահով և անվտանգ միջավայր:
Բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ:
Կրթության որակի ապահովումը չպետք է դիտարկվի մեկանգամյա գործընթաց, այլ ողջ կյանքի ընթացքում շարունակական պրոցես,որտեղ անձը շարունակաբար զարգացնելու է իր գիտելիքներն ու ունակությունները և ադապտացվի փոփոխվող աշխարհի պահանջներին, մշակույթին ,
հասարակությանը:

Ինձ համար ավելի կարևոր է այն , թե ինչպիսի մարդ կդառնան իմ աշակերտները,

քան այն, թե ինչ գնահատական կստանան քննություններին ու թեստերին…

Ուժեղ	Թույլ
Դպրոցի վարկանիշն ու հեղինակությունը բարձր է :	Որոշ մանկավարժների աշխատանքային թերացումներ:
Դպրոցում առկա է ազգային գաղափարախոսության հենքի վրա ուսուցման կազմակերպումը :	Ոչ բոլոր ուսուցիչների կողմից է այն վառ արտահայտված:
Պահպանվում են ազգային ավանդույթները:	
Խորացված ռուսերենով սովորողների ուսումնառության առավելությունը:	
Կամավոր ատեստացիային պատրաստվող և ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչներ(4 հոգի) :	Ուսուցիչնեչի փոքրամասնություն:
Օլիմպիադայում հաջողություններ գրանցած աշակերտների ուսուցուցիչների խրախուսումը:	Քիչ թվով ուսուցիչներ են արժանանում խրախուսանքի :
Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման կազմակերպում:	Պետական , կրթական չափորոշիչների ամենացածր մակարդակը որպես շեմ դիտարկելը
	Վերջին տարում տարակարգ չունեցող ուսուցիչներ:
Էլեկտրոնային դասերի անցկացում:	Ուսումնանյութական բազայի պակաս
Նախագծային աշխատանքի իրականացում :	Նախագծային աշխատանքը ոչ հմուտ պլանավորող ուսուցիչներ:
	Երկարօրյա ուսուցման բացակայություն:
Դպրոցն ունի սովորողների որակի բարձր առաջադիմություն:	Կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների ոչ նպատակային իրագործում :
Հաջողակ շրջանավարտներ	Լրացուցիչ կրթության ծրագրերի բացակայություն:
Աշակերտակենտրոն ուսուցում՝ հաշվի առնելով սովորողների միջավայրի առանձնահատկությունները:	Ուսուցչակենտրոն մեխանիզմով դասավանդող ուսուցիչներ
Կրթության կազմակերպումը՝ ոչ խտրական:	Համագործակցության պակաս այլ մարզերի ,համայնքների առաջատար դպրոցների հետ

	:

Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները , կիրառվող նորարարությունները

Մեր ժամանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) մուտք են գործում մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները, այդ թվում է նաև կրթական ոլորտը: ՏՀՏ-ի օգտագործումը դասավանդման ընթացքում ավելի է նպաստում ուսուցման արդյունա-վետությանը, մեծացնելով սովորողների անհատական, լեզվական կարողությունների զարգաց-մանը:

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները:

Հավատարիմ մնալով համամարդկային մանկավարժության հիմնադրույթներին, ուսուցման գործընթացում կիրառելով մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաները, չեմ կարող չնշել համաշխարհային տեխնիկական առաջանցիկ այն նվաճումները, որոնք էապես իրենց ազդեցությունն են թողնում կրթության ոլորտում: Դա նշանակում է, որ կրթության ցանկացած գործընթաց պետք է իրականացվի նաև ժամանակակից տեխնոլոգիաներով, այլ կերպ ասած ՏՀՏ-ների կիրառումն ուսումնական գործընթացում անհրաժեշտ է և ժամանակի հրամայական:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրներից է նաև սովորեցնել մարդուն ապրել տեղե-կատվական աշխարհում:

Դպրոցականների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմա-րության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համար, որոնց շնորհիվ ընկալվում է տեղեկատվությունը:Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, չի կարող դառնալ սովորողի սեփականությունը, դառնալ նրա մշակույթի ու ձևավորված աշխարհայացքի տարրը:

Ուժեղ	Թույլ
1 Համակարգչային կաբինետի առկայություն, որտեղ իրականացվում են վիրտուալ,էլեկտրոնային,հագեցած և ժամանակակից պահանջներին համապատասխան դասեր:	Երբեմն ինտերնետի խափանման պատճառով համակարգչով աշխատանքը դառնում է թերի :
2 SMART գրատախտակի օգտագործումը դասերի ժամանակ:	Ոչ բոլոր ուսուցիչներն են հմտորեն օգտագործում:
3. 16 տեսախցիկների առկայություն՝ դյուրին է դարձնում վերահսկողությունը:	Տեսախցիկները չեն բավականացնում դպրոցի տարածքի ամբողջական

	վերահսկողությանը:
4 Ուսումնադաստիարակչական աշխատանքները, դասղեկական և առարկայական թեմատիկ պլանները ներբեռնվում են դպրոցի պաշտոնական կայք:	Դպրոցի պաշտոնական կայքը պասիվ է:
5 Ուսուցիչները և աշակերտները տիրապետում են ZOOM և TEAMS հարթակները և մի շարք համակարգչային ծրագրեր:	

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումն իր տեղն է գտնում առաջին հերթին լավ կազմակերպված դասի ժամանակ:

Շատ կարևոր է կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար դպրոցի և ուսուցիչների դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման մակարդակն ու հմտությունները: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները

- Բարձրացնել սովորելու մոտիվացիան
- Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- Նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանները
- Բարելավել դասի անցկացման մեթոդները
- Պլանավորել, համակարգել սեփական աշխարհայացքը
- Օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- Արագ և որակյալ պատրաստվել դասին

ՏՀՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվելու տեղեկատվական հեղեղի մեջ, ընկալելու, այն հիշելու և ոչ մի կերպ չվնասելու առողջությունը: ՏՀՏ-ն պետք է օգտագործվի որպես ուսումնական գործընթաց օժանդակ, այլ ոչ հիմնական տարր:

Դասի ընթացքում ՏՀՏ-ների օգտագործումը սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ նախկինի պես պահպանվում են դասի հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց բնութագրերը:

Դասալսումների, մ/մ նախագահների, տնօրենի, տնօրենի տեղակալների արձանագրությունների հիման վրա իրականացրել եմ ուսումնասիրություն և կատարել վերլուծություն, թե հաստատության մանկավարժական համակազմը ինչպես է կիրառում ՏՀՏ-ները դասապրոցեսին:

- Թեմայի նշման համար դասի թեման ներկայացված է շնորհանդեսների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը

- Որպես՝ ուսուցչի բացատրության ուցեկից կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված շնորհանդեսներ՝ ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, մուլտեր, անիմացիաներ:
- Որպես տեղեկատու-ուսուցողական ձեռնարկ ուսուցման մեջ այսօր հատուկ շեշտադրվում է սովորողի ինքնուրույն գործունեությունը, ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման գործընթացի ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է թույլ տալիս:
- Գիտելիքների ստուգման համար համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը, թեստերը կարող են լինել հարցաշարերի տարբերակով, որոնց պատասխանները սովորողը գրառում է տետրում կամ հատուկ բլանկի վրա:

Իրականացրել եմ սոցիալական հարցում դպրոցում աշխատող 30 ուսուցիչների շրջանակում:

Հարց 1

«Ինչպես եք վերաբերվում ՏՀՏ-ների կիրառմանը կրտսեր դպրոցում»:

Հարցման մասնակից ուսուցիչների 58,2% գտնում է, որ ՏՀՏ-ները մեծապես օգնում են ուսուցչին դասագործընթացում՝ դարձնելով դասն առավել հետաքրքիր:

26,2% ուսուցիչները գտնում են, որ ՏՀՏ-ների կիրառությունը քիչ արդյունավետ է, քանզի նորագույն տեխնոլոգիաները կարող են շեղել երեխայի ուշադրությունը հիմնական նյութից:

15,6% ուսուցիչները գտնում են, որ կրտսեր դպրոցում ՏՀՏ-ները կիրառել նպատակահարմար չէ:

Դպրոցում դասավանդող ուսուցիչների մեծ մասը անցկացնում են ՏՀՏ-ների միջոցով էլեկտրոնային դասեր, ունենք SMART գրատախտակ, որի հմտորեն օգտագործումը քիչ թվով ուսուցիչների մոտ է ստացվում, այնուամենայնիվ կա ինքնակրթությամբ զբաղվող նորամուծությունների կողմնակից մանկավարժական համակազմ, որոնք ձգտում են շտկելու թերությունները՝ թե իրենց աշխատելաոճում, թե գործընկերների, որը վառ արտահայտված է հաղորդակցության և սերտ համագործակցությամբ:

Առանց կրթության մեջ ՏՀՏ-ների կիրառության, այսօր անհնար է հասնել լուրջ նպատակների ; ՏՀՏ-ն հնարավորություն է տալիս մուտք գործելու մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակը, փոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ն թույլ է տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել նույն լեզվով:

ՏՀՏ-ն ունի նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխելու:

Կառավարում

Ուժեղ	Թույլ
• Դպրոցում պարտադիր երաշխավորված էլեկտրոնային փաստաթղթերի վարում ըստ կարգի • Դպրոցն ունի ՏՀՏ լրամշակված ներքին կարգապահական կանոններ՝ ինչպես աշխատակազմի, այնպես էլ ծնողների համար • Ուսումնական հաստատությունը արդյունավետ օգտագործում է ՏՀՏ նորմատիվ փաստաթղթերը • Բոլոր աշխատակիցները տեղյակ են իրենց պաշտոնական կանոնադրական պարտականություններին՝ ՏՀՏ միջոցներով էլեկտրոնային փաստաթղթերի վարման վերաբերյալ • Կատարվում է էլեկտրոնային ներքին գնահատում • Emis.am-ում աշխատում են բոլոր մանկավարժները • Դպրոցի բոլոր հաշվետվությունները կազմվում են էլեկտրոնային ձևով • Դպրոցն ունի պաշտոնական և սոցիալական կայք էջ • Ուսուցչի թափուր տեղի մրցույթի անցկացման հայտարարությունը կատարվում է ՏՀՏ-ով	Ուսպլանը, ՈՒԴԱՊ, ՆԴՎ, թեմատիկ պլանավորումները, հաշվետվությունները ունենում են լուրջ թերություններ: Emis.am-էլեկտրոնային մատյանի լրացումները կատարվում են ուշացմամբ և թերություններով (ոչ բոլորի մոտ)

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

Ուժեղ	Թույլ
• Մանկավարժների կողմից կրթության ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի իրականացում: • Հարցմամբ հայտորոշել ուսուցիչների կրթական կարիքները, մշակել գործողությունների ծրագիր: • ԾԻԳ-ՏՀՏ վերապատրաստումներ անցած մանկավարժներ: • Դպրոցում համակարգչով աշխատում են բոլոր առարկաների շրջանակներում; • Մանկավարժներն ու աշակերտները բավարար տիրապետում են ՏՀՏ գործիքներին, ուսումնական և սոցիալական հարթակներում: • ՏՀՏ հոլովակների, տեսանյութերի, մուլտֆիլմերի օգտագործում դասերի ընթացքում:	Տարիքով մանկավարժների մոտ ՏՀՏ գործիքների տիրապետման ցածր մակարդակ կա: Ոչ բոլոր դասերին է օգտագործվում ՏՀՏ և նորարարություններ:

Վարչատնտեսական գործունեություն

Ուժեղ	Թույլ
• Համակարգիչների և պլանշետների առկայություն • Ինտերնետ կապի բավարար վիճակ • Համակարգիչների, տպիչների վերանորոգման, լիցքավորման հետևողականություն • Էլեկտրոնային SMART գրատախտակ • Գրադարանում կա համակարգիչ • Դպրոցը զինված է տեսախցիկներով	Արմաթ լաբորատորիայի բացակայություն

Կառավարում ՏՀՏ

Նպատակ	Կառավարման ոլորտում փաստաթղթաշրջանառության ՏՀՏ միջոցներով առավելագույն վարում:
Խնդիրներ	ՏՀՏ ոլորտին վերաբերող խնդիրների լուծումներ գտնելու Մոտիվացիա
Ակնկալվող արդյունքներ	Դպրոցի աշխատողների համակարգչային հաշվառման և հաշվետվության համակարգ, նյութերի տեղադրում պաշարների շտեմարանում
Ռիսկեր	Ինտերնետ վատ կապի առկայություն, հնամաշ սարքավորումներ
Ռիսկերը մեղմող գործողություններ	Ինտերնետ կապի ապահովում սարքերի անխափան աշխատանք
Հնարավորություններ	Կառավարման ոլորտում ՏՀՏ փաստաթղթաշրջանառության ՏՀՏ միջոցներով առավելագույն վարում, ՏՀՏ սարքեր և մասնագետներ
Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	• Ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնել դասաբաշխում, ձևավորել և հաստատել հաստիքացուցակը: • Ապահովել էլեկտրոնային մատյանների բարձրակարգ մատենավարությունը: • Կառավարչական բոլոր տիպի աշխատանքները թվայնացնել: • Հաստատել ուսումնական պլանը, էլեկտրոնային դասացուցակը, ուսումնադաստիարակչական աշխատանքների կիսամյակային և տարեկան հաշվետվությունները: • Կազմակերպել դպրոցի էջի վարումը դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (ԴԿՏՀ) • Ապահովել TEAMS ծրագրի ծածկագրեր ուսուցիչներին և աշակերտներին: • Բոլոր արձանագրությունները (կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների) կազմել էլեկտրոնային տարբերակով:
Պատասխանատուներ	Տնօրեն, մ/մ նախագահներ, օպերատոր, գրադարանավար, գործավար, ուսուցիչներ:
Ժամանակացույց	Ամեն ուստարվա սկզբին, 2023-2028թթ Ծրագրի իրականացման ընթացքում:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում ՏՀՏ

Նպատակ	ՏՀՏ իմացության նպատակային ներդրում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում:
Խնդիր	Պլանավորման,արձանագրման,հաշվետվությունների գործընթացում հետևել էլեկտրոնային նորարարություններին,կատարել ստեղծարար նորամուծություններ ուսուցման ,դաստիարակության գործընթացում,սովորողների սոցիալականացման ոլորտում:
Ակնկալվող արդյունքներ	Պլանավորման , արձանագրման ,հաշվետվությունների,էլեկտրոնային վարման , դասերի ընթացքում ՏՀՏ նորարարությունների օգտագործում:
Ռիսկեր	Արտակարգ իրավիճակներով պայմանավորված առցանց կրթություն: Աշակերտների կողմից ՏՀՏ ծրագրերի ուսումնական և ժամանցային նպատակներով օգտագործման տարբերակման կարողություն, թույլ մոտիվացիա դեպի ՏՀՏ կիրառում:
Ռիսկերը մեղմող գործողություններ	Վերապատրաստումների կազմակերպում ՏՀՏ ոլորտի վերաբերյալ ուսուցիչների և աշակերտների շրջանում:

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Հարցում անցկացնել ուսուցիչների շրջանում՝ բացահայտելու վերջիններիս անհատական ՏՀՏ կրթական կարիքները,մշակել գործողությունների ծրագիր;
- Կազմակերպել դասարանի կառավարման և երեխաների հետ էլեկտրոնային հաղորդակցության վերաբերյալ դասընթացներ:
- Հատատել դպրոցի աշխատակիցների պլանները ; դպրոցի ուսումնական պլանը, դասաբաշխումը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, ներդպրոցական վերահսկողության պլանը, ինչպես նաև տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդմիավորումների նախագահների մանավարժական աշխատողների, խմբակների,երկարօրյա պարապող ուսուցչի, գրադարանավարի, ուսուցչի օգնականների ,տնտեսվարի տարեկան հաշվետվությունները և աշխատանքային տարեկան պլանները. տեղադրել պաշարների շտեմարանում:
- Արդիականացնել դպրոցի պաշտոնական և ֆեյսբուքյան էջի վարումը:
- Դասերի և միջոցառումների ժամանակ օգտագործել ՏՀՏ նորարարական միջոցներ,նորագույն մեթոդներ, խաղեր:

Պատասխանատուներ---Տնօրենություն, տնօրեն, օպերատոր, ուսուցիչ

Ժամանակացույց ---------Յուրաքանչյուր ուստարվա վերջում, ուստարվա ընթացքում, օգոստոսի 25-31:

Ծրագրի իրականացման ընթացքում 2023-2028թթ

Անհրաժեշտ միջոցներ,

նյութատեխնիկական պարագաներ----ՏՀՏ դասընթացների ծրագրեր համակարգիչներ,նոթբուքեր,անխափան ինտերնետ կապ , ՏՀՏ ծրագրերի իմացություն, պատրաստակամություն,

աշխատասիրություն»

Ֆինանսական աբյուրներ----- Պետբյուջե , ուսուցիչների անձնական միջոցներ , ՀԿ-ների միջոցներ և ինտերնետ:

Վարչատնտեսական գործունեություն ՏՀՏ

Նպատակ	Դպրոցի գործունեությոն փաստաթղթաշրջանառությանը /կառավարման, ուսումնադաստիարակչական,վարչական/անհրաժեշտ ՏՀՏ գործիքների ապահովում:
Խնդիրներ	Կատարելագործել ինտերնետ կապով և ՏՀՏ նոր սարքավորումներով դպրոցի ապահովվածությունը:
Ակնկալվող արդյունքներ	ՏՀՏ վերջին հնարավորություններ ունեցող սարքերի ձեռքբերման շնորհիվ աշխատակիցների մոտիվացում դեպի ՏՀՏ գործիքով աշխատելուն:
Ռիսկեր	Ֆինանսակնա դժվարություններ:
Ռիսկերի մեղմող գործողություններ	Հովանավորների որոնումներ

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- ՏՀՏ կաբինետը համալրել անհրաժեշտ սարքավորումներով:
- Աշխատանք տանել երկրորդ բաժանորդ գտնելու ուղղությամբ
- Հետևել ՏՀՏ սարքերի, տպիչների անխափան աշխատանքին և ժամանակին լիցքավորմանը:

Պատասխանատու----համակարգող
Ժամանակացույց-ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում
Անհրաժեշտ միջոցները,
նյութատեխնիկական պարագաներ –տպիչներ,նոթբուքեր,անխափան ինտերնետ կապ
Ֆինանսական աղբյուրներ- Պետբյուջե,արտադպրոցական կամ միջազգային ծրագրեր, դոնոր կազմակերպություններ

Չափորոշչային պահանջներին համապատասխան

կրթության որակի վերլուծություն

«Ինչպիսի հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը…»

Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ , որ նրանց տալիս ենք այսօր: Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման հարցում և արտացոլում է աշխարհի այն տեսակը , որ ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար: Այսօր շատ կարևոր է ուսումնական հաստատություններում ձգտել չափորոշչահեն կրթության լիակատար կատարմանն ու ապահովմանը ,քանի որ դրանց արդյունքում ունենալու ենք ավելի ակտիվ , պատասխանատու և հաղորդակից անհատներ, ավելի քիչը չի գոհացնի բազմամասն, բազմամշակույթ և հարափոփոխ, արագ զարգացող հասարակություններին, որտեղ ապրում ենք մենք: Եվ քվանտային, հաշվողական տեխնիկայի ու արհեստական բանականության արշալույսին՝ էլ ավելի կարևոր է, որ մեր երեխաները զինվեն այնպիսի արժեքներով, մոտեցումներով, վերաբերմունքով, հմտություններով, գիտելիքներով ու քննադատական մտածողությամբ,որոնք նրանց հնարավորություն կտան կայացնել իրենց ապագայի, ինչպես նաև մեր երկրի համար պատասխանատու որոշումներ:

Հանրակրթական պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝

- ըստ կրթական աստիճանների ՝ կարողություններ, կոմպետենցիաներ,
- ըստ կրթական աստիճանների ուսումնառության ՝ ակնկալվող վերջնարդյունքներ: Ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը սանդղակը, հաշվառման կարգը:

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառականն որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը, ուստի չափորոշչահեն կրթության իրականացման հետևողականությունն ու վերահսկողության մեխանիզմները չափելի են և իրատեսական:

Վայքի հիմնական դպրոցի նախորդ տարիների ներքին գնահատման , տնօրենի , տնօրենի տեղակալների, ինչպես նաև մ/մ նախագահների իրականացրած դասալսումների և արձանագրությունների վերլուծությունների արդյունքում կրթական բարենպաստ միջավայրի անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում,ինչպես նաև տարրական և հիմնական ծրագրերի շրջանավարտների ուսումնառությանն ակնկալվող վերջնարդյունքների ճշգրտում, որն ամրագրված է հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների համար չափորոշչային պարտադիր պահանջներով:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
Մանկավարժական համակազմը մշտապես առաջնորդվում է հանրակրթական պետական չափորոշիչներով և ծրագրերով	Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների հետաքրքրության պակաս:
ՀՊՉ-ի դրույթների վերաբերյալ ուսուցիչների վերապատրաստումների մասնակցության պատրաստակամություն, ՀՊՉ-ին համապատասխան ուսուցման կազմակերպման ձգտում:	ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման միջին մակարդակը:
Կրթության բարձր որակի խթանում:	Նոր ՀՊՉ-ի պահանջներին բավարարող ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման դժվարություններ
Մ/Մ աշխատանքները կազմակերպվում են՝ հաշվի առնելով ՀՊՉ-ի պահանջները,առարկայական ծրագրերի բովանդակությունը:	
Սովորողների համար շերտավոր ուսուցում:	
Արտադասարանական խմբակների առկայություն:	
2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններումդասավանդող բոլոր ուսուցիչները մասնակցել են նոր ՀՊՉ-ի վերապատրաստումներին:	
ԿԶՆԱԿ-ի կողմից նոր չափորոշիչների ներդրման և արդյունավետ կիրառման ,կրթության որակի բարձրացման համար տնօրեն,տնօրենի տեղակալների վերապատրաստում:	
Դասարանի կառավարման նոր,արդյունավետ հնարների կիրառում, մասնակցային գործընթացների խրախուսում աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում:	
Ուսման որակի մշտադիտարկում, վիճակագրական տվյալների, աղյուսակների ,դիագրամներ:	Կան աշակերտներ, որոնք ունեն թերացումներ ուսումնական առարկաներից:

Կատարվում է ԿԱՊԿՈ սովորողների հայտնաբերում, դպրոցական մակարդակի գնահատում:	
Դպրոցի մարզադահլիճն ու մարզական գույքը նպաստում են աշակերտների ֆիզիկական դաստիարակությանը, կամային հատկանիշների դրսևորմանն ու ամրապնդմանը, որն ուսման որակի մեծ գրավական է;	
Օլիմպիադաներին և մրցույթներին սովորողների բավարար մասնակցություն:	Օլիմպիադաներում մասնակիցների հաղթանակների ոչ բավարար մակարդակ
Լաբորատորիաների ՏՀՏ ձևաչափի կիրառում ԲՏՃՄ առարկաների դասաժամերին:	Նոր տեխնոլոգիաներով լաբորատորիաների բացակայությունը հանգեցնում է ԲՏՀՄ առարկաներով հետաքրքրության պակաս:
Աշակերտական խորհրդի ակտիվ գործունեություն հետ մնացող աշակերտներին ուղղորդման գործընթացում:	Ցածր իրավագիտակցություն ունեցող սովորողների խնդիր:
Կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ:	Սովորողների ուսման որակը կախված վերահսկողության մեխանիզմների ոչ ճիշտ ընտրությունից, համընդհանուր, բավարար վերջնարդյունքի չի ապահովում ըստ կրթական աստիճանների:
Սովորողների առաջադիմության ստուգման և կրթական կարիքների բավարարման նպատակով բարձր մակարդակով կիրառվում է հայտորոշիչ գործունեություն՝ տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, ինտենսիվ դասալսումներ, առարկայական միամսյակներ, հրապարակային դասեր և այլն:	

Գոյություն ունեն առարկայական չափորոշիչներով սահմանված կրթական մակարդակներ, որի ապահովման համար ուսուցիչը կարող է ընտրել ցանկացած արդյունավետ տեխնոլոգիա, հնար ու մեթոդ: Վայքի հիմնական դպրոցն ու ուսուցիչը պետք է ձգտեն ապահովել

- Ուսուցման արդյունավետությանը նպաստող մթնոլորտ և ֆիզիկական միջավայր:
- Կազմակերպել այնպիսի ուսուցում և դաստիարակություն, որը կհանգեցնի գիտելիքի յուրացմանը, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը:
- Ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի մասնակցային որակի բարձրացում:
- Սովորողի կարողություններին համապատասխան առավելագույն կրթական մակարդակ ապահովող անհատական մոտեցում:
- Զարգացնող ուսուցման կազմակերպում, որը կառաջադրի սովորողների կարողություն-ների աճին համապատասխան կրթական նոր պահանջներ:
- Ուսուցման և դաստիարակության գործընթացում սովորողի անձնական կենսափորձը հաշվի առնելը:
- Միջառարկայական կապերի ստեղծմանն ուղղված տարբեր հնարների ու միջոցների կիրառում:

Ոսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ ելակետային հիմնադրույթները.

- Յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնել ցանկացած ուսումնական նյութ, որը ներկայացված է հոգեբանորեն և մանկավարժորեն ճիշտ ընտրված մեթոդներով:
- Երեխաները միմյանցից տարբերվում են ոչ թե ուսումնական ծրագրերի յուրացման կարողությունների սկզբունքային տարբերություններով, այլ իրենց մտածելակերպով, հոգեբանական առանձնահատկություններով, լեզվամտածողության և ընկալման յուրահատկություններով:
- Ուսուցման նկատմամբ սովորողի դրական վերաբերմունքը պայմանավորված է ինչպես ուսումնական նյութի բովանդակությամբ, այնպես էլ այդ նյութի յուրացման հաջող ընթացքով:

Որպես «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ առանձնացնում եմ ներքոգրյալ կետերը , որոնք կարող են հանդիսանալ չափորոշչահեն դասի արդյունավետության չափանիշներ և եթե յուրաքանչյուր դասապրոցեսում ուսուցիչը ձգտի հասնել դրան,ապա չափորոշչահեն կրթությունն ապահովված է ,ինչը կտա ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան և 21-րդ դարի կարողունակ,քննադատական կոմպետենցիայով մրցունակ քաղաքացի:

ՉԱՓՈՐՈՇՉԱՀԵՆ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- Ուսուցիչը սովորողներին սովորեցնում է անդրադարձ կատարելու կարողություններ, գնահատել իրենց պատրաստվածությունը,բացահայտել իրենց բացթողումները,որոնել թերացումների պատճառները:

- Ուսուցիչը ձգտում է , որ ուսումնական նյութն իմաստավորվի բոլոր աշակերտների կողմից՝ այդ նպատակների համար կիրառելով հատուկ նպատակներ:

- Ուսուցիչը հատուկ պլանավորում է դասի հաղորդակցական նպատակները:

- Ուսուցիչը ջանում է գնահատել յուրաքանչյուր սովորողի իրական առաջընթացը, խրախուսում է նույնիսկ ամենաչնչին հաջողությունները:

- Ուսուցիչն ընդունում և խրախուսում է սովորողների սեփական դիրքորոշումը ,այլընտրանքային կարծիքները:

- Ուսուցչի ոճը ,վարած երկխոսությունները, ստեղծում են համագործակցային մթնոլորտ, հոգեբանական հարմարավետություն:

- Ուսուցումը կազմակերպվում է բացահայտումների միջոցով:
- Առկա են բանավեճեր. որոնք բովանդակում են ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր մոտեցումներ, հակասություններ, միասնական որոշման որոնում:

- Սովորողին խմբով աշխատելու և խմբում մասնակիցների հետ բացահայտումներ անելու հնարավորություն է տրվում:

- Ուսուցիչը սովորողների մղում է խնդրահարույց-որոնողական և հետազոտական գործունեության:
- Եզրահանգումներ անում են իրենք՝ սովորողները:
- Դասն անցկացվում է աշակերտակենտրոն ուսուցմամբ;

- Վերարտադրողական աշխատանքները հասցվում են նվազագույնի, իսկ որոնողական աշխատանքներն ՝ առավելագույնի:

Նպատակ	Սովորողների ուսումնառության կրթության որակի բարձրացում՝ հանրակրթական պետական չափորոշչին և հանրակրթական պետական ծրագրին համապատասխան արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրության շնորհիվ
Խնդիրներ	ՈՒԴԱՊ . ՆԴՎ ներքին և արտաքին գնահատման արդյունքները և կատարել առաջխաղացմանը նպաստող գործողություններ՝ սովորողին շահագրգռել նորարարություններ կիրառելով:
Ակնկալվող արդյունքներ	Սովորողի կողմից պատասխանատվության բարձրացում ուսման և ուսուցման գործընթացում: Ունենալ սերունդ , որն իր մեջ կրում է ուսման ,մշակույթի պահպանման , գիտելիքի փոխանցման շարունակականության մեջ իր դերը և արժևորում յուրաքանչյուրի գիտելիքը, հմտությունն ու դիրքորոշումը:
Ռիսկեր	Կրթության նկատմամբ ոչ հետևողական վերաբերմունքը Ուսումնառության արդյունքների նկատմամբ սովորողների, ուսուցիչների և ծնողների անտարբերություն:
Ռիսկերը մեղմող գործողություններ	Գնահատման և հատկապես ցածր արդյունքների վերաբերյալ ՆԴՎ ծրագրերի կազմում,երկարօրյա ուսուցման կազմակերպում:
հնարավորություններ	Կոմպետենտ մանկավարժներ

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Վերահսկել ՆԴՎ բոլոր աշխատանքների կատարումը , քննարկումն ու արձանագրումը:
- Վերլուծել ներքին և արտաքին գնահատման արդյոնքները:

- Կազմակերպել առարկայական մրցույթներ, խաղեր,վիկտորինաներ, օլիմպիադաներ, ուսուցման ու դաստիարակության նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ:

- Նպաստել ուսուցիչների մեջ ինքնակրթությամբ զբաղվելու և սոցիալական հմտությունների անհրաժեշտության գիտակցմանը:
- Խթանել գիտելիք և կարողունակություններ ձեռք բերելու դրդապատճառներ,ապահովել սովորողների և ուսուցիչների ակտիվ համագործակցություն և մասնակցություն ՀՊՉ-ի սահմանած վերջնարդյունքների ապահովման համար:

- Ինտեգրել համընդհանուր ներառական կրթությունը, մշակել և ձևավորել երկարօրյա ուսուցում:
- Վերահսկողության միջոցով պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել ուսումնադաստիարակչական գործընթացը, սովորողների գիտելիքների որակական վերլուծություն և ամփոփում:
- Ապահովել խրախուսող , աջակցող, բարյացակամ մթնոլորտի ու յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններ:
- Համայնքի ներկայացուցիչների , լիազոր մարմնի , հասարակության շերտերի հետ հանդիպումների ժամանակ խրախուսական խոսքեր ասել թե ուսուցիչներին, թե սովորողներին:

Պատասխանատուներ----Տնօրենություն,ուսուցիչներ

Ժամանակացույց----------<u>Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում</u>

Միջոցներ ----------Արձանագրություններ, ՆԳ արձանագրություններ, թեմատիկ պլան, ինքնակրթության պլան, նախագծային և հետազոտական աշխատանքներ, ուսուցիչ –աշակերտ համագործակցություն, երկարօրյա ուսուցում, առարկայական և արտադասարանական խմբակներ, խրախուսանքը կառավարման և խորհրդակցական մարմիններում, պատվոգրեր, շնորհակալագրեր;

Բազմակարծիք ,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Մենք ուզում ենք, որ մեր երկրում բոլոր երեխաների համար բաց լինեն բոլոր դպրոցների և այլ կառույցների դռները, և որ նրանք, իրենց ծնողների ջերմությամբ ու աջակցությամբ շրջապատված, վստահորեն փնտրեն, գտնեն ու ապահովեն իրենց տեղն ու դիրքը հասարակության մեջ: Մարդիկ տարբեր են լինում իրենց բնավությամբ, տեսակով ու հոգատարությամբ և այդ տարբերությունն է լցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ: Սա իր արտացոլումն է գտել նաև դպրոցում:

Դպրոցն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը՝ ապահովելով տարբեր մոտեցումներ, անհատական մոտեցումներ և հնարավորություններ: Կրթության մեջ երերխաների դժվարանալը կարող է տարբեր հանգամանքներով պայմանավորված լինել և այդ դժվարությունները լինում են ժամանակավոր, որոշների մոտ երկարատև և մշտական մասնագիտական աջակցություն պահանջող խնդիր:

Այդ պատճառով «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ում արագ բացահայտվում են սովորողների կրթական կարիքները՝ միտվելով այդ կարիքները հնարավորինս հաղթահարելու գործընթացին: Խնդիրները հարթվում են ծնողների հետ աշխատանք տանելով, իսկ դպրոցի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետները, աշխատանք են տանում երեխաների հետ: Բացահայտվում են և աջակցություն ստանում այն երեխաները, որոնք ունեն ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման , միջավայրի հարմարեցումների և անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք, այլ կերպ ասած ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Դպրոցում առկա է բազմակարծիք , ներառական, մասնակցային արժեքային միջավայր, այնուամենայնիվ աշխատանքները նպատակաուղղվում են դպրոցի յուրաքանչյուր անդամի համար իր ուսումնական կյանքին առնչվող բոլոր հարցերում լիարժեք մասնակցության և ինքնադրսևորման միջավայրի ստեղծման գործում:

Այժմ Վայքի հիմնական դպրոցում կա 17 ներառված երեխա, որոնց համար ստեղծված են բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, հնարավորինս վերացվում են ֆիզիկական հարմարավետ միջավայրի համար խոչընդոտները: Ուսուցիչները, ուսուցչի օգնականների համագործակցությամբ կազմում են ԱՈՒՊ-ները, որոնք ուսումնական ծրագրերը դարձնում են առավել մատչելի՝ ելնելով երեխայի վկայագրից :Սանհանգույցներում կան հարմարություններ, ինչպես նաև բակերում թեքահարթակներ՝ հենաշարժողական խնդիր ունեցող երեխաների համար:

Մանկավարժական համակազմը սերտորեն համագործակցում է ՏՄԱԿ –ի հետ ԿԱՊԿՈՒ սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության արդյունավետության հնարավորինս բարձրացման համար:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
Առկա է հասարակության լիիրավ անդամի գիտակցության բարձր մակարդակ:	Ինքնակառավարման ցածր մակարդակ
Դպրոցում գործում են համագործակցային հարաբերություններ և կառավարվում բացառապես ժողովրդավարական ոճով:	
Ներառական կրթությունը ներդրված է դպրոցում,համագործակցում է ՏՄԱԿ-ի , մանկավարժական համակազմի, ինչպես նաև ծնողների հետ:	Բազմակարծիք,ներառական , մասնակցային արժեքային միջավայրի գնահատման համակարգի ոչ ամբողջական պատկերացում
Դպրոցում պահպանվում է մասնակցային սկզբունքը, ուսուցիչները հնարավորություն ունեն կազմակերպել, իրականացնել տարբեր միջոցառումներ, որոնց ընթացքում ստեղծագործումն ու համագործակցությունը համատեղ է:	Ոչ բոլոր աշխատակիցներն են կարողանում պահպանել առողջ , բազմակարծիք, մասնակցային սկզբունքների իրականացումը
Կրթական միջավայրն իր բնույթով նպաստում է ծնողների ,ուսուցիչների կողմից բազմակարծիք ներառական,մասնակցային միջավայրի ստեղծմանը:	
Դպրոցում նախատեսվող խմբակները՝ առողջ ապրելակերպ, մասնագիտական կողմնորոշում, կնպաստեն աշակերտների սոցիալականացման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:	Սովորողների կողմից Բազմակարծիք,ներառական , մասնակցային արժեքային միջավայրի պահպանման թյուրըմբռնումներ,տարընկալումներ և կարգապահական խնդիրների առաջացում:
Նախագծային աշխատանքի ներդնումը կնպաստի աշակերտների համար բազմակարծիք,մասնակցային միջավայրի ձևավորմանը	
Դպրոցում ձևավորված է բարոյահոգեբանական արժեքային միջավայր,որտեղ կրթության մասնակիցները՝ ծնողներ,աշակերտներ,մանկավարժներ,կառավարման մարմին, գործում են փոխհամաձայնեցված՝ ապահովելով սովորողների իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:	
Օրենքների բավարար իմացության առկայություն:	Սեփական պարտականությունների թերացում
Սովորողների կողմից հետևողականություն ուսումնական ,սոցիալական, ,ֆիզիկական խնդիրներ	Դպրոցում առկա են ուսումնական ծրագրից հետ մնացող երեխաներ

ունեցող ընկերների նկատմամբ:	,որոնց համար անհրաժեշտ է ստեղծել ինտեգրման մշակույթ ծնողի,ուսուցչի և ընկերների կողմից:
Ուսուցիչներն ու աշակերտներն մասնակցում են հասարակական ակտիվությունը խթանող,քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող ծրագրերին:	Ինքնուրույնության նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ինքնուրույն հաղթահարումը ,կազմակերպումը բավարար է,բայց ոչ գոհացուցիչ:
Ձևավորված է բավարար պատշաճ վարվելակերպ և վարքագիծ վարչական , մանկավարժական, ,ուսումնաօժանդակ,ծնողական և աշակերտական համակազմում՝ անձնական և աշխատանքային փոխհարաբերություններում:	Կան ուսումնական առարկաների ուսումնառությունից հետ մնացող աշակերտներ,որոնց հետ կանխարգելիչ պլաններով աշխատում են ուսուցչի օգնականները:
Դպրոցում իրականացվում են ծրագրեր՝ ալկոհոլի,ծխախոտի,թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերի կանխման գիտակցման ուղղությամբ	
Սովորողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելու,վերականգնելու նպատակով յուրաքանչյուր սովորող տարին մեկ անգամ անցնում է բժշկական պրոֆիլակտիկ հետազոտության:	
Պատվաստումները կատարվում են ժամանակին:	
Ակտիվ համագործակցություն բուժամբուլատորիայի հետ:	
Իրականացվում են երեխայի խնամքի ու դաստիարակության,ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման , ինչպես նաև բռնության ,ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման ,բացառման,երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ,առողջ ապրելակերպին նպաստող սեմինարներ:	
Ինչպես դպրոցի անձնակազմը,այնպես էլ սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակում ճիշտ և առանց խուճապի գործելու վարքականոններին:	

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿԱՊԿՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Աշխարհում չկա մի երեխա ,ում ընկալունակությունն ու ընդունակությունները համարժեք լինեն մեկ այլ երեխայի վերոնշյալ հատկություններին:Մենք պետք է ընկալենք,որ բոլորս՝մեծ ու փոքր ,տարբեր ենք և հենց այդ տարբեր լինելու բնական միջավայրի ընկալումն ու գնահատումը վառ արտահայտված պետք է լինի մանկավարժներիս հոգեբանության մեջ ու կնիքվի աշխատելավոճում: Յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների անհրաժեշտությունից՝ պետք է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

- *Բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում*
- *Միջավայրի ֆիզիկական խոչընդոտների վերացում*
- *հավասար հնարավորությունների ստեղծում*
- *Բազմահամակազմ մասնագիտական թիմի ձևավորում*
- *Երեխայի կրթական ծրագրերի մատչելիության ապահովում:*
- *Հաստատության վեբ կայքում « Ներառական կրթություն » բաժնի բացում՝ ընտանիքի և համայնքի հետադարձ կապի հնարավորություն:*
- *Ներառական կրթության ուղղությամբ ուսուցիչների և վերապատրաստող ուսուցիչների ապահովում:*
- *Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական ծրագրերի իրականացում:*
- *Բավարար քանակի ուսումնամեթոդական նյութերի և սարքավորումների ձեռքբերում ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար:*

Վերջին տարիներին իրականացված ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացների արդյունքում կիրառվում են ուսուցման ակտիվ և համագործակցային մեթոդները: Դրանց կիրառումն այսօր կարևոր է, քանի որ ժամանակակից աշխարհում ուսուցումը հնարավոր չէ առանց դասապրոցեսին սովորողի ակտիվ մասնակցության, ինչպես նաև բազմակարծիք արժեքային միջավայրի կարևորման և գնահատման:

Աշխատակազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները

Շատ կարևոր է դպրոցի աշխատակազմի անդամների ձեռքբերումների , նրանց նախաձեռնությունների գեղեցիկ արդյունքներն արժևորել , գնահատել , բարձրաձայնել ու խրախուսել:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
Դպրոցը մշտապես լուսաբանում է աշխատակազմի ձեռքբերումները դպրոցի պաշտոնական և ֆեյսբուքյան էջում:	
Արձանագրված հաջողությունները ոչ միայն անհատի ձեռքբերումներն են, այլ նաև թիմային,համագործակցային աշխատանքի արդյունք ,որոնք հրապարակվում են սովորողների ,ծնողների ,հասարակության և համայքի մասշտաբով՝ արժևորելով ուսուցչի դերը հասարակության կյանքում:	
Դպրոցն ապահովում է աշխատակազմի ինքնակրթության հնարավորությունները՝ տարբեր համագործակցությունների, փորձի փոխանակման ,վերապատրաստումներին մասնակից դարձնելով	Ուսուցիչների կամավոր ատեստացիայի մոտիվացիայի պակաս
Շնորհվում են շնորհակալագրեր, պատվոգրեր, ինչպես հաստատության տնօրենության,այնպես էլ մարզպետի կողմից:	
Խրախուսվում են այն ուսուցիչները, որոնց աշակերտները մարզային կամ հանրապետական օլիմպիադաներում գրանցում են հաղթանակներ ու հաջողություններ:	Աշխատակազմի անդամների խրախուսման մշակված համակարգի բացակայություն:
Դպրոցն օրենքով սահմանված կարգով ապահովում է տարակարգ ունեցող կամավոր ատեստավորված և հաջողություն գրանցած ուսուցիչների իրավունքները:	Կոչումներ,տարակարգ ունեցող ուսուցիչները և կամավոր ատեստավորված մասնագետները քիչ են :
Առկա է մանկավարժական բանիմաց համակազմ՝ բաց են նոր գիտելիքների և	Մ/Մ նորարարական ներուժի ոչ ամբողջական իրացում

համագործակցության համար	
Մանկավարժական համակազմի մեծ մասը պատրաստ է նորարարական մարտահրավերներին և համագործակցային աշխատուժին:	Մանկավարժական որոշ աշխատողների կառավարչական ոչ բարձր որակների պատճառով նրանց ցածր մանկավարժական արդյունավետությունը:
Ուսուցման շերտավոր և ստեղծագործ աշխատանքի առկայություն:	
Առաջավոր փորձի փոխանցում սկսնակ ուսուցիչներին:	
Ուսուցիչների համակազմը համալրվել է երիտասարդ SS ոլորտը տիրապետող մասնագետներով և ուսուցչի օգնականներով:	

Վայքի հիմնական դպրոցի համակազմի որակական առավել բարելավումը համարում եմ շատ կարևոր, քանի որ մարդը ինքնակրթվում, զարգանում և կատարելագործվում է իր կյանքի ողջ ընթացքում:

Բոլոր ուսուցիչները հինգ տարին մեկ մասնակցում են վերապատրաստման դասընթացներին: Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 1/5 –ը մասնակցում է պարտադիր ատեստավորմանը, կատարելագործում մասնագիտական հմտություններն, ուսուցման մեթոդներն ու հնարները: Ուսումնաօժանդակ աշխատողների անթերի աշխատանքն ակնհայտ է ինչպես սովորողների համար, որոնք ամենայն հարգանքով են մոտենում նրանց, այնպես էլ ծնողների , ուսուցչական համակազմի և հասարակության կողմից:
Հարգանքն ու խրախուսանքը արժևորման կարևորագույն գործոններից են: Խրախուսանքը խթանում է նաև այն ուսուցիրներն, ովքեր կամավոր ատեստավորման հանդեպ դեռ ներքին ձգտում չունեն:

2023թ-ի պարտադիր ատեստավորման մասնակցած ուսուցիչների անվանացանկ

Անուն	*Ազգանուն*	*առարկա*
Արևիկ	*Գալստյան*	*դասվար*
Սուսաննա	*Կոստանյան*	*դասվար*
Արևիկ	*Գալստյան*	*դասվար*
Քնարիկ	*Ստեփանյան*	*ինֆորմատիկա*
Գեղանի	*Աթանյան*	*երաժշտություն*
Լուսինե	*Սամսոնյան*	*պատմություն*
Քնարիկ	*Մուրադյան*	*մաթեմատիկա*
Սարիկ	*Կոստանյան*	*ֆիզկուլտուրա*

Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ,7-րդ դասարանների հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերապատրաստված ուսուցիչներ.

Անուն	**Ազգանուն**	**առարկա**
Սուսաննա	Հարությունյան	Դասվար 2-րդ դաս.
Մերի	Իխտիարյան	Դասվար 2-րդ դաս.
Լուսինե	Աթանակինյան	Դասվար 2-րդ դաս
Վարդուհի	Հակոբյան	Պատմություն
Քնարիկ	Մուրադյան	մաթեմատիկա
Անահիտ	Ղազարյան	մաթեմատիկա
Լուսինե	Սամսոնյան	պատմություն
Նունե	Գևորգյան	Անգլերեն
Արմանուշ	Հարությունյան	Անգլերեն
Էլմիրա	Թովմասյան	Հայոց լեզու
Ռայա	Հովակիմյան	Հայոց լեզու
Աստղիկ	Խաչատրյան	Հայոց լեզու
Ծովիկ	Սաֆարյան	Հայոց լեզու
Գայանե	Խաչատրյան	Քիմիա
Զարուհի	Օհանյան	բնագիտություն
Աննա	Եղոյան	ինֆորմատիկա
Մելինե	Մանասերյան	աշխարհագրություն
Գայանե	Մելքոնյան	Ռուսաց լեզու
Արփինե	Վարդանյան	Ռուսաց լեզու
Ժենյա	Ավետյան	Ռուսաց լեզու
Տաթևիկ	Հովսեփյան	Կենսաբանություն
Լիաննա	Խալաթյան	ֆիկուլտուրա
Սարիկ	Կոստանյան	ֆիկուլտուրա

Նպատակ	Ուսուցիչների ինքնակրթուրյան մասնագիտական հմտությունների զարգացում
Խնդիրներ	Շահագրգռել,մոտիվացնել ուսուցիչներին վերապատրաստումներին ակտիվ մասնակցելու և ինքնակրթությամբ զբաղվելու:
Ակնկալվող արդյունքներ	Աշակերտակենտրոն մոտեցումներ,սկզբունքային ,արդար գնահատում:Ուսուցիչների մասնակցություն տարբեր մրցութային և կատարելագործման ծրագրերին:Մեդիագրագիտության բարձրացում:
Հնարավորություններ	Ինքնազարգացման բաց ռեսուրսների առկայություն:Պետության կողմից ֆինանսավորվող վերապատրաստումներ,ատեստացիա,ԿԶՆԱԿ հիմնադրամի,ՀԿ-ների կողմից կազմակերպվող վերապատրաստումներ:
Ռիսկեր	Ուսուցիչների վերապատրաստումների նկատմամբ անլուրջ վերաբերմունքը և թիմային աշխատանքի մեջ չընդգրկվելը: Արտակարգ իրավիճակներ:Ուսումնական ֆիզիկական միջավայր անբավարարա առկայություն:
Ռիսկերի մեղմում	Շարունակաբար խթանել ուսուցիչների որակավորման բարձրացման հնարավորությունները:

Նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ

- Ստեղծել հանձնախումբ, գնահատել կարիքները
- Համագործակցել մենթոր դպրոցի հետ
- Մշակել ուսուցիչների վերապատրաստման կայուն համակարգ
- Ապահովել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, որից հետո դիտարկել ձեռք բերած հմտությունը խմբային քննարկումների միջոցով:
- Մշակել ուսուցիչների ներքին գնահատման և խրախուսման ընթացակարգեր,խթանել դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեությունը, նպաստել ուսուցիչների մեթոդական վարպետության կատարելագործմամանը;
- Սահմանել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ ուսումնական կանոնադրությամբ սահմանված:
- Կառավարման նոր ,արդյունավետ հնարքներ կիրառել, մասնակցային գործընթացների խրախուսման նպատակով՝ ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցություն:

Պատասխանատու----------տնօրեն,տնօրենություն,ուսուցիչներ
Ժամանակացույց----------ծրագրի իրականացման ժամանակ
Անհրաժեշտ միջոցներ նյութատեխնիկական
միջոցներ---- Ուսումնամեթոդական արդի գրականություն
Ուսուցիչների կամավոր և պարտադիր ատեստավորում: Դասերի ամենօրյա պլանավորում, պատվոգրեր, շնորհակալագրեր,գովասանագրեր,դրամական խրախուսում :
Ֆինանսական միջոցներ-------Պետբյուջե,կրթական ծառայությունների մատուցման համար նախատեսված միջոցներ, դրամական խրախուսում:
Վերահսկողության մեխանիզմ ------Ներքին գնահատում, մշտադիտարկում , հաշվետվություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից և ժողովրդավար ցանկացած հասարակություն նանհնար է պատկերացնել առանց անհատների, ովքեր ունակ են քննադատաբար մտածել , վերլուծել երևույթները,ովքեր ունակ են փնտրել և գտնել լուծումներ խնդիրներին, ինչպես նաև ակտիվ մասնակից են տարբեր հանրային քննարկումներին և պատրաստ են կառուցողական փոխզիջման:Կրթական համակարգի խնդիրն է օգտագործել կրթության բոլոր մասնակիցների ներուժը, ստեղծել արդյունավետ համագործակցություն բոլոր մակարդակներում: Հիշենք, որ մասնակցությունը չի ավարտվում դասարանի շեմին, մասնակցությունն ու մասնակցային մշակույթը սկիզբ է առնում յուրաքանչյուր դասարանից , ի վերջո դպրոցը երեխաներին պատրաստում է կյանքին ,որտեղ երեխաները պետք է կարողանան գտնել իրենց տեղն ու դերը : Աշակերտները դպրոցում ձևավորում են , նաև զարգացնում բոլոր այն հմտությունները , որոնք անհրաժեշտ են դիմակայելու և հաղթահարելու ժամանակակից մարտահրավերները:

Տեղին է հիշել Դարվինի խոսքերը.

Գոյատևում է ոչ ամենաուժեղը,ոչ էլ ամենախելացին,այլ նա , ով լավագույնն է արձագանքում փոփոխություններին:

Այսինքն հենց նա , ով լավագույնն է արձագանքում փոփոխություններին, կարողանում է հմտորեն հաղթահարել ծագող մարտահրավերները, դա կոմպետենտ մարդն է:
Այս ամենից ելնելով ՝ իմ առջև դրել եմ նպատակ նպաստել , աջակցել, կազմակերպել կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված ուսուցում, ինչպես նաև ուսումնա-դաստիարակչական ողջ գործընթացը կազմակերպել այդ գաղափարի հենքի վրա:

Դիրքորոշում Գիտելիք հմտություններ
կոմպետենտություն

Ուսումնական հաստատությունը կառավարվում է ժողովրդավարության , մարդասիրության ու մատչելիության , թափանցիկության,անձի ազատ զարգացման , ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման , ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զարգացման սկզբունքների վրա: Բավարարում է սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի այնպիսի ուղիներ, որոնց արդյունքում յուրաքանչյուր սովորող կանցնի ինքնահաստատման ուղին՝ դառնալով իր ուժերին վստահող, ինքնուրույն, քննադատական մտածողությամբ կոմպետենտ անհատ: Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթության գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Կառավարման գործընթաց

Դպրոցի կրթական կարիքների վերհանման և դրանց լուծման ուղիները պետք է նպաստեն կրթության որակի բարձրացմանը՝ լինելով համակողմանիորեն և ամբողջական, վերահսկելի, գործեն կառավարման ճիշտ մեխանիզմներով,միտված լինեն ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացմանը:

ուսումնական հաստատությունում որակը բավականին բարձր հիմքերի վրա է, գործող բոլոր օղակներն ունեն բարեխիղճ , իրենց պաշտոնային պարտականություններում չթերանալու աշխատելաոճ ու գիտակցում , որ և ամենակարևորը՝ հայրենասիրություն, բանզի հայրենասիրությունը սկիզբ է առնում ոչ միայն սահմանից, այլև թիկունքում:
Յուրաքանչյուր մարդ իր աշխատանքը կատարում է սիրով ու հայրենանվեր գիտակցումով՝ այսօր փորձելով կերտել այն կոմպետենտ սերունդը, որ դառնալու են վաղվա մեր օրը, երկրի ապագան շենացնողները:

- Կրթության գործընթացը կազմակերպվում է բարեխղճորեն, այնուամենայնիվ ունի գործընթացի բարեփոխման կարիք:
- Դպրոցում աշխատում են նորագույն տեխնոլոգիաներով, բազմակողմանի զարգացած մանկավարժներ ,բայց կրթության հարաճուն բարեփոխումները ժամանակի զարգացող պահանջներին համապատասխան որակ ապահովող մասնագետների համալրման կարիք ունի:
- Կիսամյակի ընթացքում մշտապես վերհանվում են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, գնահատում ռիսկերը:
- Ուսման արդյունավետության բարձրացման , առաջավոր փորձի ձեռքբերման համար, համագործակցում են դպրոց-ծնող-ընտանիք տեսլականով:
- Գործում է ուսումնական հաստատության Մ/Մ նախագահների, դասղեկների ,ուսուցիչների , ինչպես նաև ուսումնաօժանդակ աշխատողների ինչպես անհատական, այնպես էլ թիմային վերահսկողություն տնօրենության և ուսումնական հաստատության

վարչատնտեսական համակարգողի և նաև ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ ՆԵՐՔՈԳՐՅԱԼ ՈԼՈՐՏՆՈՒՄ

- Կրթության կազմակերպման բարեփոխում:
- Կատարել իրավիճակի փոփոխություն:
- Անձնակազմի հանդեպ պահանջների որոշում
- Ըստ անհրաժեշտության իրականացնել ներդպրոցական վերահսկողություն , հետադարձ կապ հաստատելու համար, ամփոփել մանկավարժական համակազմի գործունեության համապատասծանությունը պլանավորած աշխատանքի արդյունքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Նպաստել սովորողների անհատական կրթական կարիքների բավարարմանը:

- Ձևավորել ուսուցման բարձր արժեհամակարգ:
- Ապահովել ուսուցման բարձր որակ ,արդյունավետ և ժամանակակից պահանջներին համապատասխան խրթություն:
- Համընդհանուր ներառական կրթության իրականացում;
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը , սոցիալ –մշակութային միջոցառումներում
- Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում սովորողների ներգրավվածություն:
- Ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությամբ տարվող աշխատանքների ապահովում:
- Դպրոցում ձևավորված ավանդույթների շարունակականություն:
- Բացահայտել երեխայի ունակությունները, տաղանդը և ապահովել նրա անընդհատ զարգացումը:
- Ուսուցիչների ինքնակրթության և դասավանդման մեթոդների ստեղծագործական մակարդակի բարձրացում;
- Հիշատակի և խանարհման երթեր:
- Գիտելիքների որակական նորցուցանիշների աստիճանական ակնկալում:
- Ապահովել ուսուցման մեթոդների իմացություն և կիրառում ՝ ազգային, համամարդկային բարոյական արժեքների վրա հիմնված կրթություն և դաստիարակություն կազմակերպելու համար:

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Կրթության կազմակերպման միջավայրի բարելավում:
- Ապահովել աշակերտների մտավոր զարգացման համար անհրաժեշտ պայմանները:
- Բավարար ռեսուրսների ձեռքբերում ՝ իրագործելու ծրագրում ամրագրված դրույթները:
- Վարչատնտեսական գործունեության արդյունավետ կառավարում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պայմանավորված և իրականացրած արդյունքների համեմատման գործընթացն է :Գնահատման գործիքներ ծառայում են յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշներն ամբողջացնում և ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները շատ կարևոր են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը նախատեսված է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատմանը մասնակից են վարչական և մանկավարժական աշխատողները , սովորողներն ու ծնողները: Արտաքին և ներքին գնահատումն ուղղված է կրթության որակի բարձրացմանը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՍՏԱԿ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ

ՆՊԱՏԱԿՈՎ՝

կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները:

- Սովորողների առաջադիմության աճի կամ նվազման դինամիկան ՝ նախորդ երկու կիսամյակների ցուցանիշների տոկոսային համեմատականը:
- Աշակերտների հաջողությունները առարկայական օլիմպիադաներից ՝ մարզային , հանրապետական և միջազգային :
- Սովորողների ՝ տվյալ առարկայի ավարտական քննությունների արդյունքները:
- Տրված գրավոր աշխատանքների արդյունքները, գնահատումն իրականացվում է ըստ « Անբավարար» ստացած սովորողների թվի:
- Դասավանդող առարկայի որակի ցուցանիշը՝ տրված գրավոր աշխատանքից « Լավ» և «Գերազանց» գնահատական պաշտպանած սովորողների և նախորդ կիսամյակում « Լավ» և « Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվերի համեմատականը:

Հաստատությունում բազմակարծիք ,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման նպատակով սահմանում ենք հետևյալ չափանիշները

- Բազմակարծիք միջավայրի ապահովումը, որը ենթադրում է բազմազանության ճանաչում, երկխոսության խթանում , ինչպես նաև ներառում ՝ հարգանք և հանդուրժողականություն մյուսի և նրա իրավունքների նկատմամբ:
- Նախագծային աշխատանքի ներդրումը, հետազոտական , ստեղծագործական, մեթոդների համադրության սկզբունքով:
- Դպրոցում բարոյահոգեբանական արժեքային միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը ,ծնողն ու մանկավարժը որպես կրթության մասնակիցներ , գործում են փոխհամաձայնեցված:
- Բազմակարծիք, մասնակցային լայն միջավայրի ապահովմանը միտված միջոցառումների իրականացում՝ խորհրդակցական մարմինների, համայնքի, շահառու այլ կազմակերպությունների հետ համագործակցելով:
- Երեխաների իրավունքների և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին համապատասխանող արժեքային միջավայրի ապահովում:
- Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող , զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված ներառական միջավայրի ապահովումը:

Հաստատությունում աշխատակազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման նպատակով սահմանում ենք հետևյալ չափանիշները

- Աշխատանքային փորձ, անհրաժեշտ որակավորում ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետների արժևորում, խրախուսում ՝ կիրառելով հստակեցված խրախուսման գործիքներ:
- Բարձր պատասխանատվություն, նվիրվածություն, դրսևորող աշխատակիցների, օլիմպիադաներում հաղթանակներ գրանցած սովորողների ուսուցիչների խրախուսում՝ խրախուսման նոր մեթոդների մշակում և ներդրում:
- Աշակերտակենտրոն ուսուցմամբ առաջնորդվող սովորողների նկատմամբ անհատական մոտեցումներ և վերաբերմունք դրսևորող, սովորողների հաջողությունները կարևորող, մանկավարժ-մասնագետների արժևորում և խրախուում:

ԻՆՔՆԱԿՐԹՈՒՐՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

- Պրակտիկ աշխատանքում մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում և կիրառում:
- Մանկավարժությաննվաճումներն ուսուցիչներին հասանելի դարձնելու գործիքակազմերի և մեխանիզմների մշակում,սեմինարների կազմակերպում,,մանկավարժական մեթոդական ընթերցումների ապահովում:
- Մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերի մշակում և տարագրում, փորձարարական մեթոդական աշխատանքներն իրականացնելու համար համապատասխան պայմանների ստեղծումէ մանկավարժական կադրերի ինքնակրթության հնարավորությունների ընդլայմանը նպաստելու նպատակով:

ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑ-ՀԱՄԱՅՆՔ ԿԱՊԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ՆԿԱՏԻ ԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- Դպրոցի ու համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումների գիտակցության բարձրացումը բոլոր շահագրգիռ օղակների հետ:
- Դպրոց-համայնքի ներկայացուցիչնմերի հետ հանդիպումների պարբերականությունը ,փոխադարձ պատրաստակամությունը, խնդիրների վերհանման և քննարկումների արդյունքում հետևողականորեն լուծումներ տալու և կատարված աշխատների վերլուծության պարագայում ավելի բարձր համագործակցության ձգտում:
- Նախագծային աշխատանքներ իրականացնելիս համայնքային կարիքների քննարկում ,համատեղ նախաձեռնությունների արդյունքում դպրոց-համայնք կապի առավել ամրապնդում:
- Դպրոց-ծնողական համայնքի կապի անընդհատությունն ու փաստացի կատարած աշխատանքների արդյունավետությունը:
- Դպրոց- ծնողական համայնք ի ներգրավվածություն և մասնակցային գործունեություն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում և վերջինիս արդյունավետության հարցում լայն համագործակցություն:
- Դպրոցի և գործընկեր կառույցների միջև կայացած հանդիպումների պարբերականությունն ու առնչվող հարցերի լուծումները գտնելու գործընթացի արդյունավետությունը:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ և ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ,ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԵՏևՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Արտադպրոցական ուսուցման գնահատման չափանիշներն են

- Պայմանների ստեղծում՝ հետաքրքրությունների զարգացման նպատակով:
- Հոգևոր, ֆիզիկական , գեղագիտական զարգացման ապահովումը:
- Ռազմահայրենասիրական դաստիարակության աստիճանը;
- Բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերումը:

Երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներն են

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև ցածր առաջադիմությամբ սովորողներին , լրացուցիչ կրթական ծրագրեր մատուցելը :
- Սովորողների դասապատրաստումներին պատշաճ կարգով աջակցելը,
- Սովորողի ինքնուրուն սովորելու կարողությունները:
- Սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում սովորողի ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելը:

ՀԱԼԱԾԱՆՔԻ, ՕՏԱՐՄԱՆ և ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԵՏևՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ***Հաստատությունում սովորողի պաշտպանվածության ապահովումը*** ցանկացած հոգեբանական և ֆիզիկական ճնշումներից , հալածանքից, օտարումից, շահագործումներից, մանկավարժական, ինչպես նաև այլ աշխատողների այնպիսի գործողություններից,որով խախտվում են սովորողի իրավունքները:
- *Սովորողի պատվի ու արժանապատվության նկատմամբ ոտնձգության կանխարգելում:*
- *Դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ* ***բուլինգին*** *,վերհանել առկա խնդիրները:*
- *Ծնողական համայնքի հետ* ***« Բուլինգի կանխարգելման գործում ծնողի դերի կարևորությունը»*** *թեմայով սեմինարներ:*
- *Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վերաբերմունք, վարքագիծ և վարվելակերպ միմյանց նկատմամբ:*
- *Ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումների պլանավորումներ,վերապատրաստումներ:*

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ , ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ , ԹԱՓԱՆՑԻԿ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ , որտեղ սովորողը վստահորեն կարտահայտի իր կարծիքն ու համոզմունքները;

- Պատրաստել անհատ , ով համարժեք գնահատում է իրավիճակը,սեփական հնարավորությունները և պատրաստ կլինի լուծումներ տալու խնդիրներին:

- Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել կրթական միջավայր և յուրաքանչյուր սովորողի համար ապահովել կրթական գիտելիքներին համահունչ ուշադրություն:
- Իրականացնել ծրագրեր ալկոհոլի , ծխախոտի, հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելու նպատակով:

- Գործարկման մեջ դնել սովորողների նկատմամբ բռնության , ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման , երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ:

- Ուսումնամեթոդական նյութերի ստեղծում և միջոցառումների կազմակերպում՝ այդ թվում նաև մեդիայի միջոցով, ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:

- Տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային , ֆիզիոլոգիական ու սոցիալ հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց կյանքի սեփականության և առողջության պահպանման համար:

- Բռնության , հալածանքի , օտարման կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը խորհրդակցական մարմինների և համապատասխան կառույցների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ տարաբնույթ հանդիպում-քննարկումների իրականացում,անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում , վերահսկողության գործիքակազմերի հստակեցում:

Հաստատությունում առկա հիմնախնդիրներ

Ոլորտ	Հիմնախնդիր
1.Ուսումնական ֆիզիկական միջավայր	Շենքային պայմանները լիարժեք չեն համապատասխանում որակյալ կրթություն և անվտանգ միջավայր իրականացնելու համար: Նյութատեխնիկական բազայի մասնակի բացակայություն որակյալ կրթություն ապահովելու համար:
2.Աշխատակազմ	Պաշտոնային պարտականությունների ոչ լրիվ կատարում , ուսուցիչների ինքնազարգացման մոտիվացիայի պակաս ,դասապրոցեսում ուսուցիչների ՏՀՏ-ների կիրառման կարողությունների դժվարությունները ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ շերտավորված ուսուցում կազմակերպելու խոչընդոտները, փոխադարձ դասլսումների և համապատասխան գործակցային վերլուծության բացակայություն:
3.Կառավարման և ծնողական խորհուրդների դերի բարձրացում	Կառավարման և խորհրդակցության մարմինների ոչ մասնակցային պասիվ գործունեությունը չի խթանում ուսումնադաստիարակչական արդյունավետ աշխատանքների կազմակերպման բարենպաստ պայմանների, բարոյահոգեբանական միջավայրի ստեղծմանը:
4.Աշակերտական համակազմ	Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակաս,առաջադիմության բարձրացմանն ուղղված պասիվ գործունեության ուսումնադաստիարակչական ,վարքականոնների և արժեքային համակարգի նկատմամբ անտարբերություն
5.Բարոյահոգեբանական ուսումնական միջավայրի ստեղծում	Ժամանակակից կրթության պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի թերակատարումը չի նպաստում կրթության որակի բարելավմանն ու բարձրացմանը : Կրթության պահանջներին համապատասխան առարկայական կաբինետների բացակայություն: Բարոյահոգեբանական նպաստավոր

	միջավայրի ոչ մշտական ապահովվումը,աշակերտ-ծնող-ուսուցիչ թույլ կապը կհանդիսանա սովորողների առաջադիմության անկման պատճառ:
6.Համագործակցությունը համայնքի ,կրթության կառավարության ղեկավար մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	.Համայնքային , մշակութային միջոցառումներին մասնակցային պասիվ գործունեությունը չի նպաստում և չի ինտեգրում սովորողների հասարակական կյանքին, ինչը ինքնուրույն ապրելու, իրենց դրսևորելու և քննադատական կոմպոնենտներով օժտված քաղաքացու զարգացման հիմքն է: .Սովորողների սոցիալականացման բացակայություն: . Համայնքի կրթության կառավարման ղեկավար մարմինների հետ մասնակցային մշակույթին վատ տիրապետելն խոչընդոտում և չի նպաստում սովորողների հասարակականկյանքին ինտեգրվելուն:
7. Չափորոշչահեն կրթության որակ	Ուսուցիչների կրթության բարեփոխումների, չսովորողների և ուսումնական ծրագրերին ոչ լրիվ տիրապետելը կհանգեցնի կրթության ցածր որակի .Սովորողների կարգապահության և ուսումնատենչության բացակայությունը , պատասխանատվության պակասը,մասնակցային մշակույթի բացակայությունը խոչընդոտում են կրթության որակի բարձրացմանը:

8.Տեխնոլոգիաներ և նորարություններ	Ուսման որակի բարելավմանը չի նպաստում ՏՀՏ կիրառման միջոցներին անլիարժեք տիրապետումը , ուսուցիչների տեխնիկային տիրապետելու և նպատակաուղղված ու պլանավորված կիրառելու հմտությունների պակասը, համակարգչային կենտրոնի և նյութատեխնիկական բազայի սակավությունը:

Հիմնախնդիր 1

Ուսումնական ֆիզիկական միջավայրի բարելավում

Նպատակ	• Ուսումնական, ֆիզիկական միջավայրի ապահովում: • Ստեղծել առարկայական կաբինետներ՝ կրթության պահանջներին համապատասխան:
Խնդիրներ	• Դպրոցի շենքային պայմանները, մասնավորապես 3-րդ մասնաշենքը, մարզադահլիճը, ինչպես նաև մարզական գույքի և նյութատեխնիկական բազայի բացակայությունը բացասաբար են ազդում կրթության որակի վրա, մեծ դժվարություններ է առաջացնում առանց ռեսուրսի կազմակերպել որակյալ կրթություն: • Առկա գույքի ռեսուրսների պահպանմանը զուգահեռ անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ձեռք բերում: • Լաբորատոր սարքավորումների և դիդակտիկ պարագաների ոչ արդիական և ժամանակակից որակները չեն ապահովում նորարար կրթական տեխնոլոգիաներով դասավանդմանը:
Գործողություններ	• Ուսումնական միջավայրի (ֆիզիկական և նյութատեխնիկական բազայի) համալրում նոր ժամանակներին համապատասխան: • Դպրոցի շենքային պայմանների և սովորողների համար անվտանգ ու բարենպաստ կրթական միջավայր, ինչպես նաև բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում, շենքային և գույքային պայմանների ստեղծում: • Գրել դրամաշնորհային ծրագրեր դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար: • Գտնել բարեգործներ, հովանավորներ: • Դիմել լիազոր մարմնին: • Դպրոցի ֆինանսական տնտեսումների հաշվին ձեռք բերել համապատասխան անհրաժեշտ գույքը: • Վերանորոգման գործընթաց: • Կազմակերպել շաբաթօրյակ:
Ակնկալվող արդյունքներ	«Վայքի հիմանական դպրոց»-ը կհամալրվի նոր գույքով • համակարգիչներ • մարզասարքեր • ԿԱՊԿ ունեցող աշակերտներին բարենպաստ պայմանների ստեղծում, (սանդուղքների հարմարեցում, թեքահարթակներ, ռեսուրս կաբինետ): • Լաբորատոր սարքավորումներ՝ ԲՏՃՄ առարկաների արդյունավետ, որակյալ դասերի ապահովման համար , մանրադիտակներ, աստղադիտակ: • Տեխնոլոգիական հաստոցներ, կարի մեքենաներ:

	• Մարզադահլիճի հիմանորոգում, հանդերձարանների վերանորոգում: • 3-րդ մասնաշենքի հիմնանորոգում (2-րդ մուտքի ապահովմամբ): • Դասասենյակների և սանհանգույցների վերանորոգում: • Բարեկարգված ռազմագիտության դասարան և հրաձգարան: • Նոր և ժամանակակից գրադարանի և ընթերցասրահի ստեղծում՝ վերազինում նոր գրքերով:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • Վարչատնտեսական համակարգող • Տնտեսվար • Խորհրդի նախագահ • Ուսումնաօժանդակ աշխատողներ
Ժամանակացույց	2023-2028թթ-ի ընթացքում Կառավարման խորհրդի նիստերի ժամանակ 5-10.2024 5-10.2025 5-10.2026 5-10.2027 5-10.2028 Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ
Գնահատման չափանիշներ	• Ուսումնական հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: • Ուսումանական հաստատության գույքը գրեթե ամբողջությամբ նորացված է՝ համապատասհանում է սովորողների անվտանգությանը, ամուր է , թարմ, բարվոք վիճակում: • Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի համար, ուսումնական գործընթացի կազմակերպման համար, ինչպես նաև առողջության պահպանման համար անհրաժեշտ ծառայությունների առկայություն: • Ունի ամենաբարձր սանիտարահիգիենիկ մակարդակով ապահովված բուֆետ- ճաշարան, որտեղ տաք սնունդով ապահովվում է կրտսեր դպրոցի շուրջ 345 սովորող (1-4-րդ դասարաններ):
Ռիսկեր	• Աշխատուժի բացակայություն: • Ֆինանսական ոչ բավարար միջոցներ: • Իրավական հնարավոր կարգավորումների բացակայություն:

Ռիսկեր մեղմող գործողություններ	• Դպրոցի աշխատուժի օգտագործում: • Դրամաշնորհային ծրագրեր: • Ֆինանսական այլ աղբյուրների ձեռքբերում(օրենքի սահմաններում)
Միջոցներ	• Բարերարների բյուջե: • Դպրոցի բյուջե: • Դրամաշնորհներ: • Հոգաբարձուների խորհուրդ:
Նյութատեխնիկական պարագաներ	• Գործիքներ: • Սարքեր: • Տեխնիկական միջոցներ, սարքավորումներ:
Վերահսկողության մեխանիզմներ	• Խորհրդի ամենամյա ծախսերի նախահաշիվ, ֆինանսական հաշվետվություններ: • Արդյունավետ միջոց՝ դպրոցի 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված գործունեության աշխատանքային պլանների կատարողականներն են: • Գործունեության թափանցիկություն:

Հիմնախնդիր 2

Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների որակական բարելավում

Նպատակը	• Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների որակական բարելավում: • Համակազմի շարունակական համալրում փորձառու և որակյալ կադրերով: • Ապահովել բոլոր ուսուցիչների համակարգչային գրագիտությունը, բարձրացնել ՏՀՏ –ների կիրառման կարողունակությունը:
Խնդիրները	• Մանկավարժական համակազմի ինքնազարգացմանն ուղղված մասնագիտական հմտությունների: բարձրացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը: • Մասնագիտական և դասավանդման որակների համապատասխանության

	մակարդակը արդի ժամանակաշրջանի և նորարար կրթական տեխնոլոգիաներով ապահովվող կրթության չափանիշներին:
Գործողությունները	• Կազմակերպել մանկավարժների՝ տարբեր վերապատրաստումներին ակտիվ մասնակցային գործունեությունը: • Մեծացնել առարկայական մասնախմբերի գործունեությունը, պլանավորված աշխատանքի կատարման հետևողականությունը, սկսնակ ուսուցիչների մեթոդական ինչպես նաև մասնագիտական աջակցությունը: • Կազմել ուսուցիչների ինքնակրթության պլաններ և իրականացնել դրանք: • Մեծացնել ներդպրոցային վերահսկողությունը: • Մասնախմբերի կողմից առարկայական ռեսուրս կենտրոնների ստեղծում: • Փոխադարձ դասալսումների և համագործակցության ակտիվացում: • Առարկայական շաբաթների և դասերի դիտարկման արդյունքում ներքին գնահատման վերլուծություն: • Վերապատրաստված ուսուցիչների մոտ մշտադիտարկումներ: • Ուսուցիչների արժևորման խրախուսման միջավայրի ձևավորում: • Կամավոր ատեստացիայի մասնակցության համար ինքնակրթության զարգացում, մոտիվացիա:
Ակնկալվող արդյունքներ	• Կունենանք կրթություն, որը կհամապատասխանի արդի ժամանակաշրջանի պահանջներին: • Արդյունավետ դասապրոցես: • Կմեծանա սովորողների հետաքրքրությունը ուսման և ժամանակակից կրթություն ստանալու մեջ: • Մոտիվացված ուսուցիչներ, որոնք կգոհանան իրենց դասավանդման որակներից, մեթոդներից և յուրաքանչյուր դասի համար ակնկալվող վերջնարդյունքներից: • Առաջավոր փորձի հիման վրա

	աշխատանքների ակտիվացում: • Ուսուցիչների գնահատման և խրախուսման նոր գործիքակազմի ներմուծման դեպքում՝ մանկավարժի աշխատանքում գործունեության արդյունավետության բարձրացում:
Պատասխանատուները	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • ՄՄ նախագահներ
Ժամանակացույց	• Պլանավորումներն ուս-տարվա սկզբին Հոկտեմբեր – նոյեմբեր2024թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2025թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2026թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2027թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2028թ. • Ներքին գնահատում ներդպրոցական վերահսկողություն 1-10 դեկտեմբեր- 2024թ. 1-10-դեկտեմբեր- 2025թ. 1-10-դեկտեմբեր-2026թ. 1-10-դեկտեմբեր-2027թ. 1-10-դեկտեմբեր-2028թ. • Ինչպես նաև 2-րդ կիսամյակ 10-20 ապրիլ-2025թ. 10-20 ապրիլ-2026թ. 10-20 ապրիլ -2027թ. 10-20 ապրիլ-2028թ.
Գնահատման չափանիշները	• Կամավոր և վերապատրաստված ուսուցիչների թիվը: • Տարակարգ ստացած ուսուցիչների թիվը: • Հմտորեն նախագծային ուսուցում կազմակերպող ուսուցիչների թիվը:: • Բարոյահոգեբանական միջավայրին նպաստող և մանկավարժական հմտություններով աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ, ՏՀՏ-ների գործիքակազմով աշխատող և նոր մեթոդներին տիրապետող ուսուցիչների թիվը:

Ռիսկեր	• Իրավական հնարավոր կարգավորումների բացակայությունը: • Ուսուցիչների՝ վերապատրաստումներին մասնակցելու ցածր մոտիվացիան: • Ֆինանսավորման հետ կապված փոփոխություններ՝ ֆինանսական միջոցների նվազում
Ռիսկեր մեղմող գործողություններ	• Ուսուցիչների խրախուսական միջոցառումները՝ տարբեր եղանակներով:
Միջոցներ	• Դպրոցի բյուջե: • Օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ: • Շրջանավարտների խորհրդի միջոցով: • Ձեռնարկատիրությունից առաջացած միջոցներով:
Վերահսկողության միջոցներ	• Ներքին գնահատման վերլուծություններ: • Արտաքին գնահատման վերլուծություններ: • Տեսչական մարմնի կողմից կատարված ստուգումների արդյունքներ: • Հաշվետվություններ՝ դասղեկների, դասվարների: • Մշտադիտարկումներ տնօրենության կողմից: • Դասալսումներ, քննարկումներ, վերլուծություններ: • Կատարողականի վերլուծություններ

Հիմնախնդիր 3

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Նպատակ	Դպրոցի կառավարման խորհրդի դերի բարձրացում:
Խնդիրներ	Կառավարման խորհրդի՝ դպրոցի հետ համագործակցության և մասնակցային դերի բարձրացում :
Գործողություններ	• Կառավարման խորհրդի անդամների՝ դպրոցում իրենց մասնակցային և կարևորագույն դերի գիտակցմանն ուղղված զրույցներ: • Կապն այլ խորհուրդների հետ՝ համագործակցության բարձրացում: • Մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, ներքին գնահատման աշխատանքներին: • Կրթության պետական կառավարման լիազոր մարմնին առաջարկություններ ա) շենքային պայմանների վերաբերյալ բ) կրթության որակի մասին գ) ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրման վերաբերյալ դ) ֆինանսական միջոցներ (օրենքով չարգելված) հայթայթելու համար
Ակնկալվող արդյունքներ	• Կունենանք կրթություն, որը կհամապատասխանի արդի ժամանակաշրջանի պահանջներին: • Արդյունավետ դասապրոցես: • Կմեծանա սովորողների հետաքրքրությունը ուսման և ժամանակակից կրթություն ստանալու մեջ: • Մոտիվացված ուսուցիչներ, որոնք կգոհանան իրենց դասավանդման որակներից, մեթոդներից և յուրաքանչյուր դասի համար ակնկալվող վերջնարդյունքներից: • Առաջավոր փորձի հիման վրա աշխատանքների ակտիվացում: • Ուսուցիչների գնահատման և նաև խրախուսման նոր գործիքակազմի ներմուծման դեպքում՝

	մանկավարժի աշխատանքում գործունեության արդյունավետության բարձրացում:
Պատասխանատուները	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • Մ/Մ նախագահներ
Ժամանակացույց	• Պլանավորումները ուս-տարվա սկզբին Հոկտեբմեր – նոյեմբեր 2024թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2025թ. Հոկտեմբեր –նոյեմբեր 2026թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2027թ. Հոկտեմբեր – նոյեմբեր 2028թ. • Ներքին գնահատում, ներդպրոցական վերահսկողություն 1-10 դեկտեմբեր – 2024թ. 1-10 դեկտեմբեր - 2025թ. 1-10 դեկտեմբեր - 2026թ. 1-10 դեկտեմբեր - 2027թ. 1-10 դեկտեմբեր - 2028թ. • Ինչպես նաև 2-րդ կիսամյակ 10-20 ապրիլ -2024թ. 10-20 ապրիլ -2025թ. 10-20 ապրիլ- 2026թ. 10-20 ապրիլ- 2027թ. 10-20 ապրիլ – 2028թ.
Գնահատման չափանիշներ	• Խորհրդի նիստերի արձանագրություն: • Նիստերի արձանագրություններ մատյանների վարում: • Կառավարման խորհրդի հաշվետվություններ: • Հանրային քննարկումներ, ծնողների, աշակերտների մասնակցությամբ:
Ռիսկեր	• Կառավարման խորհրդի և դպրոցի համատեղ գործողություններ, գործունեության պասիվություն:
Ռիսկերը մեղմող գործողություններ	• Զրույցներ: • Սեմինարներ՝ կառավարման խորհրդի իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացման համար: • Հարցումներ և արդյունքների վերլուծություն:

Միջոցներ	• Հանդիպումներ: • Քննարկումներ: • Թրեյնինգներ : • Կառավարման խորհուրդների օրինակելի գործունեության մասին ֆիլմեր, ցուցադրումներ: • Բանավեճ:
Նյութատեխնիկական պարագաներ	• Ֆիլմերի և տեսանյութի դիտման համար անհրաժեշտ պարագաներ: • Կլոր սեղան: • Համացանց, սոցցանցի օգտագործում:
Վերահսկողության մեխանիզմներ	• Կատարողականի հաշվետվություն: • Վերլուծություն: • Կատարած վերլուծության հիման վրա առաջարկություններ՝ գործունեության ակտիվացման և համագործակցային բարելավման համար: • Ներքին գնահատում:

Ծնողական խորհուրդ

Նպատակը	• Ծնողական խորհրդի դերի բարձրացում:
Խնդիրներ	• Ծնողական խորհրդի մասնակցային գործունեության բարձրացում և համագործակցումը դպրոցի հետ: •
Գործողություններ	• Ծնողական խորհրդին ընդգրկել և դարձնել մասնակից ուսման կարևորագույն ոլորտներում (ուսումնադաստիարակչական գործընթացին): • Ապահովել սերտ կապ մյուս խորհուրդների հետ: • Մեծացնել նրանց բազմակարծիք և մասնակցային գործունեությունը ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրման հարցում: • Իրենց իրավունքների և պարտականությունների սահմաններում

	ապահովել տեղեկատվության կազմակերպումը՝ դպրոցի կառավարման և մանկավարժական խորհրդի հետ կապի ամրապնդմամբ:
Ակնկալվող արդյունքներ	• Դպրոցի Ծնողական խորհրդի և ուսումնական հաստատության սերտ կապը կդառնա խթան դպրոցի առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ կառավարմանը:
Պատասխանատուները	• Տնօրեն : • Տնօրենի տեղակալներ: • Ծնողական խորհրդի նախագահ, անդամներ:
Ժամանակացույց	• Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր հերթական և արտահերթ նիստերի ժամանակ 2023-2028թթ:
Գնահատման չափանիշներ	• Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին; • Ծնողների մասնակցությունը ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ ընդգրկելով հովանավորների: • Ծնողների ներգրավվածությունը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում: • Տնօրինությանը ներկայացված առաջարկությունները, իրատեսական լինելը և քանակը: • Ծնողխորհրդի արձանագրությունները
Ռիսկեր	• Դպրոցի կրթական գործունեության իրենց մասնակցային դերի և կարևորության անտեղյակություն: • Համագործակցության պակաս::
Ռիսկերը մեղմող գործողություններ	• Իրազեկվածության բարձրացում: • Համագործակցություն UNICEF-ի և «Ծնողի դպրոց» ՀԿ-ի հետ: • Առողջ բանավեճ: • Ծնողական համակազմի իրազեկում կրթական գործունեությանը: • Ծնողավար ռազմավարության

	մոտեցումների վերամշակում
Միջոցներ	• Ընթերցումներ: • Զրույցներ: • Էքսկուրսիաների կազմակերպում: • Ֆիլմերի դիտում: • Հանդիպումներ: • Քննարկումներ • Առողջ բանավեճ
Նյութատեխնիկական միջոցներ	• Կլոր սեղան
Վերահսկողության մեխանիզմներ	• Ծնողխորհրդի աշխատանքների կատարմանն ուղղված • Քննարկումներ • Վերլուծություն • Խորհրդի կազմի բարելավմանն ուղղված առաջարկություններ: • Ընթացիկ և արտահերթ ծնողական ժողովների արձանագրություններ

Հիմնախնդիր 4

Աշակերտական համակազմ

Նպատակը	• Աշակերտական խորհրդի գործունեության բարձրացում:
Խնդիրներ	• Աշակերտական խորհրդի դպրոցի գործունեության մեջ մասնակցային դերի կարևորության գիտակցման բարձրացումը: • Համագործակցության ակտիվացումը դպրոցի հետ:
Գործողություններ	• Աջակցել ԱԽ-ին գիտակցելու իրենց ակտիվ մասնակցային դերը որպես դպրոցի ինքնավարություն և ինքնակառավարման ռեսուրս: • Տալ առավելություններ կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների կատարման մեջ՝ ինքնավարության միջոցով: • Աշակերտական խորհրդի իրավունքների և

	պարտականությունների գերակա գիտակցմանն ուղղված աշխատանքներ: • Նպաստել ԱԽ-ի գործունեության հիմքում հասարակական անհատի կրթման, քննադատական մտածողությանն ուղղված աշխատանքներ: • Աշխատանքներ տանել ԱԽ-ի սեփական կարծիքների ազատ արտահայտման հնարավորության ուղղությամբ: • Օժանդակություն՝ ԱԽ-ի նախաձեռնություն: • Մասնակցության ապահովումը (մանկավարժական խորհրդին) խորհրդակցական ձայնի իրավունքով՝ անհրաժեշտության դեպքում: • Իրականացնել ամենօրյա աշխատանքներ, շարունակել միջոցառումները, հանդիպումները, առողջ բանավեճերը, որոնք կնպաստեն սովորողների ուսման նկատմամբ անձնային բարձր գիտակցումն ու մոտիվացիան: • Նպաստել սովորողների ճիշտ և պատշաճ վարքականոնների ձևավորմանը (կիրառելի թե ուսումնական միջավայրում, թե հասարակության մեջ): • Ամրապնդել կապն այլ խորհուրդների հետ • Ըստ կանոնադրության ԱԽ-ի հանձնախմբերի աշխատանքների արդյունավետ գործունեության համար ստեղծել ռեսուրս սենյակ: • ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական միջավայրի ինտեգրմանն ուղղված գործողությունների ակտիվացում: • Աշակերտ – աշակերտ, աշակերտ- ուսուցիչ, աշակերտ – ծնող, աշակերտ- համայնք հարաբերությունների ամրապնդում: • Դպրոցական կյանքի ակտիվ մասնակցային գործունեության կարևորում :
Ակնկալվող արդյունքներ	• Կհամախմբվի աշակերտական համակազմը: • Կձևավորվեն նոր ու գեղեցիկ ավանդույթներ՝ հների պահպանման հենքի վրա: • Կնպաստի դպրոցի արդյունավետ կառավարմանը՝ այնք դարձնելով ավելի թափանցիկ , հստակ և դպրոցի առաքելության նպատակներին հասնելուն: • Բազմակարծիք, մասնակցային մտածողության բարձրացում:

	• Ժողովրդավարության սկզբունքներով և ինքնավարությամբ ակտիվ ԱԽ:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • ԴԱԿ • Աշակերտական խորհրդի նախագահ • Աշակերտներ
Ժամանակացույց	• Ըստ կանոնադրության հերթական, նաև արտահերթ աշակերտական խորհրդի նիստերում 1-10 2024թ. 1-10 2025թ. 1-10 2026թ. 1-10 2027թ. 1-10 2028թ. • Ուստարվա ընթացքում
Գնահատման չափանիշները	• Աշակերտական խորհրդի արձանագրություններ • Աշակերտական խորհրդի հանձնախմբերի կատարած աշխատանքները՝ ուղղված ուսումնական և սոցիալական միջավայրին: • Աշակերտական խորհրդի նախաձեռնությունները սովորողների միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, խնդրահարույց սովորողների վարքականոնների բացատրմանը՝ խնդիրները մեղմելու, լուծելու ուղղությամբ: • Ցածր առաջադիմությամբ սովորողներին ուսման մեջ առաջադիմության բարձրացման նպատակով նախաձեռնած քայլերը: • Ուսումնադաստիարակչական հարցերին ուղղված առաջարկությունները՝ ներկայացված տնօրենին:
Ռիսկեր	• Պասիվ մասնակցային գործունեությունը • Անտարբերությունը • Ֆորսմաժորային իրավիճակները
Ռիսկերը մեղմող գործողություններ	• Ռազմավարություն, որը կբարձրացնի ԱԽ-ի (ընդհանուր առմամբ աշակերտների) մասնակցային մշակույթը դպրոցի գործունեության և համագործակցության մեջ, ֆորսմաժորային իրավիճակում՝ համագործակցությունն իրականացնել օնլայն հարթակների միջոցով: • Անտարբերության վերացմանն ուղղված աշխատանքների մշակում:

Միջոցներ	• Միջոցառումներ • Ֆիլմերի դիտում • Հավաքներ • Կապի ամրապնդում • Ընթերցումներ • Ճանաչողական էքսկուրսիաներ
Նյութատեխնիկական պարագաներ	• Առողջ բանավեճ • Կլոր սեղան • Նյութատեխնիկական բազա (համակարգիչներ, կապի միջոցներ)
Վերահսկողության մեխանիզմներ	• ԱԽ-ի կատարած աշխատանքների վերլուծություն • ԱԽ-ի արձանագրությունների մատյան, վարման որակը և բովանդակությունը:: • Հիմնախնդիրների, առաջարկությունների կատարման ընթացքը և համապատասխանությունը Հաշվետվություններ:

Հիմնախնդիր 5

Ուսումնական բարոյահոգեբանական միջավայրի ստեղծում

Ուսումնական բարոյահոգեբանական միջավայրը ներգործուն ազդեցություն ունի անհատի ձևավորման, նրա ինքնադրսևորման, արժևորման և վերջապես հասարակության մեջ իր դերի և կարևորության ընկալման մեջ:

Ուսումնական հաստատություններում կրթությունը չի լինի բարեհաճ ու անհրաժեշտ, որակյալ ու անձի ձևավորմանն ուղղված այն նպատակային հիմքը, որով կունենանք ազգային գաղափարախոսության հենքի վրա զարգացած, քննադատական կոմպետենցիայով, առողջ դատողությամբ խելացի սերունդ: Այն կարծես շղթայական ռեակցիա է, որի ելանյութերից են ընտանիքը, դպրոցը: Շատ կարևոր է դպրոցի ողջ աշխատակազմի կողմից ունենալ սրտացավ և կառուցողական վերաբերմունք ուսումնական բարոյահոգեբանական միջավայրի ստեղծման գործում:

Նպատակ	• Ուսումնական բարոյահոգեբանական միջավայրի ստեղծում:
Խնդիրներ	• Բարոյահոգեբանական միջավայրի նպաստավոր համագործակից օղակների պասիվությունը (աշակերտ- ուսուցիչ-ծնող, դպրոց-համայնք-ընտանիք) կխոչընդոտի սովորողների առաջադիմության բարձրացմանը:
Գործողություններ	• Բարոյահոգեբանական բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղղված աշխատանքներ: • Վերհանել և բացահայտել կոնֆլիկտների, անհանդուրժողականության, փոխադարձ հարաբերություններում անհամաձայնության պատճառները: • Ուսումնասիրել և բացահայտել դժվար դաստիարակվող, խնդրահարույց սովորողներին, նրանց հետ (հոգեբանի, դասղեկի, ծնողի) համագործակցությամբ կատարել հոգեբանական աշխատանք: • Կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, բանավեճ, ֆիլմի ցուցադրումներ <<Բուլինգ>> թեմայի շրջանակներում՝ ծնողների, աշակերտների, մակավարժների մասնակցությամբ: • Մանկական տեսուչի, իրավապահ մարմինների հետ համագործակցելով ունենալ դրական արդյունք դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտի նպաստավոր պայմանների ձևավորման համար: • Սովորողների անվտանգային ուսումնառության և դաստիարակությանն ուղղված միջոցառումներ: • Ծնողների և ուսուցիչների հետ սերտ համագործակցություն: • Աշակերտների նկատմամբ ֆիզիկական, ինչպես նաև հոգեբանական ճնշման բացառում: • Կանխարգելիչ միջոցառումներ ծխախոտի, ալկոհոլի, թմրամոլության և հոգեմետ նյութերի օգտագործման վերաբերյալ:

	• Դպրոցում թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական համակազմի ներդաշնակ գործունեության համար բարոյահոգեբանական բարենպաստ միջավայր:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • ԴԱԿ • Ուսուցիչներ • Աշակերտական խորհուրդ • Մանկական տեսուչ • Հոգեբան • Ծնողական խորհուրդ
Ժամանակացույց	• Ամբողջ ուստարվա ընթացքում 2023-2028թթ: • Մանկավարժական խորհրդում, ծնողական և աշակերտական խորհուրդների հերթական և արտահերթ նիստերում • Սովորողներ:ի մասնակցությունը և ներգրավվածությունը դպրոցական կյանքին 20.30.09 2024թ. 20.30.09 2025թ. 20.30.09 2026թ. 20.30.09 2027թ. 20.09.30 2028թ.
Գնահատման չափանիշներ	• Ծնողների հետ՝ իրազեկման միջոցառումներ, որոնք կբացահայտեն ուսումնական հաստատությունում իրականացված գործողությունները երեխայի խնամքի, սանիտարահիգիենայի պահպանման, ընտանիքում երեխայի դաստիարակության մեջ ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, բարոյահոգեբանական և ֆիզիկապես ճնշման բացառման ուղղությամբ: • Ուսումնական հաստատությունում իրականացված սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ: • Դպրոցում իրականացված ֆիզիկական ցավի և մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ:

	• Մարմնական վնասվածքների կամ բուլինգի ենթարկված սովորողների բացահայտման դեպքում զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկումներ մշակելու մեխանիզմներ :
Ռիսկեր	• Ոչ բացահայտ հալածանք, բռնություն • Հոգեբանական ոչ ակնառու ճնշում, շանտաժ:
Ռիսկեր մեղմող գործողություններ	• Ծնողների հետ թեստերի, հարցաթերթիկների անանուն լրացում: • Գործող արկղիկ՝ տեսախցիկից դուրս, որտեղ սովորողները կգրեն և կներկայացնեն իրենց մտահոգությունները, որի բացահայտման հասանելիությունը կլինի միայն տնօրենի մոտ: • Դիտարկումներ • Վերլուծություններ • Բացահայտումներ • Ծնողավարության ռազմավարության բարձրացում: • <<Ծնողի դպրոց>> ՀԿ-ի հետ համագործակցություն
Նյութատեխնիկական պարագաներ	• Ֆիլմերի ցուցադրում <<Բուլինգ>> վերնագրով: • Թրաֆիկինգից խուսափելու գրագիտությանն ուղղված ուսուցողական միջոցառումներ, սեմինարներ: • Ընթերցումներ <<Բուլինգ թեմայով>> • Նախագծային և հետազոտական աշխատանք վերոնշյալ թեմաներով • Դպրոցի հոգեբան, ոստիկան:
Վերահսկողության մեխանիզմներ	• Վերահսկողություն դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանման, ինչպես նաև աշխատողների և սովորողների պահանջների կատարման մեջ: • Անաչառություն • Հնարավորություն սովորողների սեփական կարծիքի և տեսակետների արտահայտման հարցում:

Հիմնախնդիր 6

Համագործակցությունը համայնքի կրթական կառավարման ղեկավար մարմինների և շահառու կազմակերպիչների հետ:

Նպատակը	• Ամրապնդել համագործակությունը համայնքի,կրթականն կառավարման ղեկավար մարմինների և շահառու կազմակերպությունների հետ;
Խնդիներ	• Մեծացնել ակտիվ մասնակցային գործունեությունը և համագործակցությունը կրթական հաստատությունների՝ այդ թվում առաջատար ուսումնական հաստատությունների, բարձր վարկանիշ ունեցող դպրոցների , ինչպես նաև ՀԿ –ի հետ, որոնք նպաստում են կրթության որակի բարձրացմանը: • Հասարակության մեջ ակտիվ քաղաքացու ձևավորում : • Համագործակցությունը համայնքի ՀՈԱԿ-ների հետ: • Համայնքի կարիքների վերհանման և դրանց լուցումներում մասանակցային գործունեության բարձրացում :

Գործողություններ	• Ակտիվացնել փոխադարձ կապը համայնքի և կրթության շահառու ՀԿ-ների , ինչպես նայև կրթության կառավարման մարմինների հետ՝ կազմակերպելով • միջոցառումներ • քննարկումներ • բանավեճեր • Վերլուծություններ • հանդիպումներ • Կլոր սեղաներ • Հրավիրել համադպրոցական միջոցառումներ: • Ակտիվորեն մասնակցել մարզային և համայնաքյին ՀԿ-ների միջոցառումներին: • հնարավորության դեպքում ապահովել հանդիպումներ Դիլիջանի դպրոցի ,Շիրակացու ճեմարանի • Գլոբալ Բրիջ դպրոցի հետ կրթական նորարությունների փորձի փոխանակման նպատակով: • Դաստիարակել քաղաքացիական հասարակության արժեքները կրող անհատի ով օժտված կլինի կամավորեության և առաջնորդության սկզբունքով :
Ակնկալվող արդյունքներ	• Որակյալ կրթություն • Զարգացած , կիրթ, մասնակցային արժեքներով , քննադատական կոմպոտենտներով , ժողովրդավար և իրավիճակներում ճիշտ կողմնորոշվող քաղաքացի :

Պատասխանատուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • Մ/Մ նախագահներ • Ուսուցչական կազմ
Ժամանակացույց	• 2023-2028թթ,յուրաքանչյուր տարվա ընթացքում • 20-30.04.2024 • 20-30.04.2025 • 20-30.04.2026 • 20-30.04.2027 • 20-30.04.2028
Գնահատման չափորոշիչներ	• Սովորողների տեղեկացվածության մակարդակը համայնքային հիմնախնդիրներին ,դրանց վերհանման և մասնակցային գործունեությունը սովորողների կողմից : • Ուսումնական հաստատության կողմից ՀԿ-ների հետ կատարած կրթական ծրագրերի թիվը , նպատակի վերլուծությունը: • ԿԱՊԿՈՒ երեխանեիր մասնակցությունը համայնքանին , համայնքային կյանքին :
Ռիսկեր	1. Աշակերտների մոտիվացիայի պակաս : 2. Սովորողների ակտիվ մասնակցային ,ազատ և քննադատական մտածողության պակաս : 3. Անտարբերությու:ն 4. Դպրոցի գործունեության մասնակցության պակաս համայնքի կողմից : 5. Դպրոցական միջոցառումներին ՀԿ-ների մասնակցության պասիվությունը:

Ռիսկերը մեղմող գործողություններ	• Միջոցառումների բովանդակային աշխատանքները համապատասխանեցնել համայնքի կարիքներին և իրականացնել դրանց ուղղված գործողություններ : • Մոտիվացյաի բարձրացման մշակում արդյունավետ համագործակցության համար որպես ռեսուրս ՝ մարդկային արժեքները:
Միջոցներ	6. Դպրոցի սեփական միջոցներ: 7. Օրենքով չարգելված ֆինասական այլ միջոցներ : 8. Դրամաշնրային ծրագրեր :
Նյութատեխնիկական պարագաներ	• Նախագծային աշխատանքների պրոդուկտներ: • Տրանսպորտ • Կապի միջոցներ • Կլոր սեղան
Վերահսկողության մեխանիզմները	9. նախագծային աշխատանքների համապատասխանեցում՝ համայնքի կարիքներից ելնելով:

Հիմնախնդիր 7 Չափորոշչահեն կրթության որակ

նպատակը	Չափորոշչահեն կրթության որակի բարելավում և ապահովում:
Խնդիրներ	• Ուսուցիչների առարկայական գիտելիքների կամավոր և պարտադիր ատեստավորում • ուսուցիչների կողմից չափորոշչոհեն կրթության իրականացում: • դասավանդման նոր տեխնոլոգիաների կիրառման և նորարարական մեթոդաբանություն: • իրականացրած դասերի մանրակրկիտ վերլուծություն: • Գնահատման նոր համակարգի իրականացման ,կիրառման հմտություններ :
Գործողություններ	• Ուսուցիչների ինքնազարգացաման մոտիվացիա : • կրթության որակի շարունակական բարելավումը նոր չափորշչային պահաջներին համապատասխան: • ՀՊՉ-ների վերապատրաստում : • Աշակերտական խորհրդի ուսումնառության գոհունակության առաջարկությունների կամ դիտողությունների վերլուծում: • Նախագծային աշխատանքների պլանավորում և հանրայնացում: • Առավելապես 2-րդ , 5-րդ , 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների նոր չափորոշչային պահանջներին համապատասխան դասավանդման ուղղված աշխատանքների կազմակերպում : • Համագործակցություն լավագուն ուսումնական հաստատությունների հետ: • Գիտաժողովների կոնֆերանսների մասնակցություն:
Գնահատման չափորոշիչներ	• Արտաքին և ներքին գնահատման արդյունքներ , դրանց համամեմատակա վելուծությունը: • Կառավարման խորհրդի կողմից ուսումնական հասատատությանը տրված գնահատականը: • ԳԹԿ-ի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքներ: • Մշակութաին և ստեղծագործական մրցույթներում մասնակիցների թիվը: • Մարզային հանրապետական օլինպիադաների թիվը , ձեռքբերումների և արդյունքների վերլուծություն:
Ակնկալվող արդյունքներ	• Բարձր առաջադիմությամբ սովորողներ: • Որակյալ և արհեստավարժ ուսուցիչներ :

	• Մոտիվացված աշակերտներ: • Մարզային և հանրապետական օլիմպիադաների մասնակցության շատացում: • ԲՏՀՄ առարկաների նկատմամբ ուսուցիչների և աշակերտների հետաքրքրության բարձրացում:
Պատասխանատուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • Մ/Մ նախագահ • ուսուցիչներ • աջակցություն տրամադրող թիմ
Ժամանակացույց	• 2023-2028թթ-ի ողջ ուումնական տարվա ընթացքում:
Ռիսկեր	• Կրթության նկատմամբ անտարբերություն: • Աշակերտների ՝ սովորելու մոտիվացիայի պակաս: • ՈՒսուցիչների՝ նորարական մոտեցումների մերժում՝ նոր տեխնոլոգիաներով աշխատելու պակաս: • Ծնողների անտարբերություն: • Ոչ բոլոր ուսուցիչների սրտացավ աշխատանքային գործունեություն : • Ֆիզիկական և ուսումնական կրթական միջավայրի ոչ բարենպաստ պայմաններ: • Հեռախոսներից կախվածություն:
Ռիսկեր մեզմոզ գործողություններ	• Վերապատրաստումներ և կամավոր ատեստացիայի մասնակցություն: • Տարբեր հնարներով նորամուծությունների ներմուծման բարձրացնել սովորողների մոտիվացիան կրթության և գիտելիքի նկատմամբ: • Աշխատանք ծնողների հետ: • Ուսուցիչների հետեվողական և պատշաճ աշխատանքի հետևողականություն:
Միջոցներ	• Դպրոցի ֆինասական միջոցներ: • Հոգաբարձուների միջոցով:
Նյութատեխնիկական պայմաններ	• Նորագույն տեխնոլոգիաներով վերազինված առարկայական ռեսուրս կաբինետներ:
Վերահսկողության մեխանիզմներ	• Վերահսկողություն և հետևողականություն : • Թեմատիկ պլանների մշակում, համապատասխանությունը չափորոշիչներին • Կառավարման խորհրդի , ծնողական ,մանկավարժական խորհուրդների ՝ ուս – հաստատության գործունեությանը տված գնահատական:

Հիմնախնդիր 8

Տեխնալոգիաներ և նորարարություններ

Դպրոցում ՏՀՏ-ն դարձել է որակյալ և արդիական կրթության հրամայական և ուսուցման նորարարական գործիք:

Ժամանակակից կրթական համակարգում դրանք արդյունավետ և գործունակ միջոցներ են, որոնք ստեղծագործ մտածողության խթանիչներ են;

ՏՀՏ-ները հնարավորություններ են ընձեռնում դասապրոցեսները դարձնել այնպիսի միջավայր ,որտեղ սովորողներն անկախ իրենց ընդունակություններից և կարողություններից ,կդրսևորվեն որպես անհատներ ՝ ակտիվ ինտեգրվելով դասապրոցեսին:

Նպատակը	• **ՏՀՏ- Կ**իրառման, նորամուծությունների միջոցով դասի արդյունավետության բարձրացում
Խնդիրներ	• Դպրոցի մանկավարժական և վարչական աշխատակազմի ՏՀՏ կիրառման հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստումների կազմակերպում
Գործողություններ	• ՏՀՏ գործիքներով դասերի անցկացում հմուտ ուսուցիչների և վերապատրաստողների կողմից : • Էլեկտրոնային մատյանների նոր կարգիհամաձայն վարմանհմտություններ:
Ակնկալվող արդյունքներ	• Առավել արդյունավտ դասերի անցկացում • Սովորողների կողմից դասապռոցեսի նկատամամբ հետաքրքրության ընդլայնում • Կրթության որակի բարձրացում • Էլեկտրոնային հետաքրքիր և արդյունավետ դասերի անցկացում
Պատասխանատուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալներ • Մ/Մ նախագահ • ուսուցիչներ
Ժամանակացույց	• 2023-2028թթ-ի ամբողջ ուս տարվա ընդացքում: • Աշխատանքների կատարողականի արդյունավետության նկատմամբ գնահատում մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ (ուս տարվա վերջին) • 01-07-2024 • 01-07-2025 • 01-07-2026 • 01-07-2027

	• 01-07-2028
Գնահատման չափորոշիչներ	• Ժամանակակից մեթոդով դասավանդման հմտություններ ուսուցիչների կողմից: • Վիրտուալ , էլեկտրոնային դասերի անցկացում • ՏՀՏ կարողունակություններ դրանցով առաջադրանքների կատարում
Ռիսկեր	• Նորամուծությունների նկատմամբ հետաքրքրությունների պակաս : Դպրոցի աշխատակազմի ՏՀՏ կարողությունների և պատրասվածության պակաս: • Սոցիալական խնդիր (տանը տեխնիկայով ապահովվածության պակաս)
Ռիսկեր մեղմող գործողություններ	• Առաջավոր փորձի փոխանակում • Տարբեր գործիքակազմով բարձրացնել դպրոցի մանկավարժ աշխատակազմի հետաքրքրությունը նոր տեխնոլոգիաններով աշխատելու
Միջոցներ	• Դպրոցի միջոցներ • Օրենքով չարգելված այլ ֆինասավորման այլ աղբյուրներ • Պետական բյուջե
Նյութատեխնիկական պայմաններ	• Ինտերնետ կապ • համակարգիչներ • SMART գրատախտակ սմարթֆոններ (միայն ուսումնական նպատակով)
Վերահսկող մեխանիզմներ	• Ներքին գնահատման արդյունքներ • Էլեկտրոնային դասերի արդյունավետություն վերլուծություններ • Էլեկտրոնային մատյան • Արտաքին գնահատում ,տեսչական ստուդումներ • Դասալսումներ

Թվարկված խնդիրները լուծելու արդյունքում ակնկալվում է , որ դպրոցում՝

- Կապահովվի արդիական և որակյալ կրթություն, որի արդյունքում կավելանա հայրենասեր, հաջողակ, և մրցունակ շրջանավարտների թիվը:
- Կընդլայնվեն սովորողների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները:
- Սովորողները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու մեջ:
- Սովորողների մոտ կձևավորվի վերլուծական և քննադատական մտածողություն՝ապահովելով ազատ քաղաքացու ձևավորումը:
- Կբարելավվեն ուսուցիչների մասնագիտական որակները , կմեծանա վերջիններիս գործունեության արդյունավետությունը, կմեծանան դպրոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից դրական արդյունքներ դրսևորելու ցանկությունը և նախաձեռնողական որակները:
- Կավելանա որակավորման տարակարգ ունեցող և հավելավճար ստացող ուսուցիչների թիվը:
- Կրթական ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների , ՀԿ-ների հետ համագործակցությունը կնպաստի կրթության արդիականացմանը:
- Դպրոցի կառավարումը կդառնա ավելի ժողովրդավար ու թափանցիկ :
- Կմեծանա դպրոցի , մանկավարժական կոլեկտիվի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի , ինչպես նաև նրա ընտանիքի անդամների վստահությունը, և կաճի դպրոցի գործունեության բարելավմամբ շահագրգիռ անձանց թիվը:
- Արդյունքում կունենանք ,ազատ վերլուծող, իր ուժերի վրա վստահ, քննադատական մտածողությամբ կոմպետենտ քաղաքցի,ով իր ոժերին կվստահի ու կյանքի տարբեր իրավիճակներում ճիշտ և խելացի դրսևորմամբ կհաղթահարի բոլոր մարտահրավերները:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի և մարզպետի աշխատակազմի կայքում, այն հասանելի է : Ծախսերի հիմնական ուղղություններն են

1) Աշխատավարձի վճարումներ
2) Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
3) կոմունալ ծախսեր
4) գրասենյակային և տնտեսական ծախսեր
5) կենցաղային ծախսեր
6) էլեկտրաէներգիյի և գազի համար նախատեսված ծախսեր
7) Հանրային սննդի ծախսեր
8) Նպատակային ծախսեր

Համաձայն դպրոցի կանոնադրության տվյալ ուսումնական տարվա համար կազմվում է բյուջեի նախագիծ, ներկայացվում է դպրոցի կառավարման , մանկավարժական, ծնողական խորհուրդներին, դրական եզրակացության դեպքում , ներկայացվում է լիազոր մարմին՝ այն հաստատելու:

Ստորև ներկայացվում է 2018-2023թթ ֆինանսական ցուցակները

Ֆինանսական ցուցանիշներ	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
Ներառական	15974.8	16336	16974.7	11612.7	----------
Վայքի հիմն.	98169.0	96685.5	109397.8	118254.6	129611.8
Ընդհանուր	114143	113021.5	126372.5	129867.3	129611.8

Աշխատանքի Վարձատրության և դրան հավասարեցված վճարումներ / այդ թվում եկամտային հարկը/	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ	Դրամաշնորհներ և այլ տրանսֆերանտներ	Այլ ծախսեր	Դրամական միջոցների տարեվերջի/հաշվետու ժամանակաշր

												ջանի վերջի/ մնացորդը
Ծրագրային ցուցանիշը	Փաստացի /դրամարկղային/ ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	Ծրագրային ցուցանիշը	Փաստացի/դրամարկղային /ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	Ծրագրային ցուցանիշը	Փաստացի/դրամարկղային /ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	Ծրագրային ցուցանիշը	Փաստացի /դրամարկղային/ ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	
111014.6	109058.8	1955.8	21635.4	15393	6242.4	00	00	00	10640	4526.3	6113.7	14311.9
Ընդամենը գործառական ծախսեր՝ 143290												

Ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի սահմանված ձևեր, ժամանակացույց

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ / ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՍԱՀՄԱՆ-ՎԱԾ ԺԱՄԿԵՏ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմ.ժամկետում միջոցառման/գործողությունների չկատարման կամ մասնակի կատարման/առկայության դեպքում /պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	նշումներ

Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում	Դասի ավելի արդյունավետ կազմակերպում	2023-2028 թթ				
Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում,նախապատրաստում ատեստավորման	Ժամանակակից մեթոդների օգտագործում	Տարվա ընթացքում				
Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ;	ՏՀՏ –ների օգտագործում դասի ընթացքում	2023-2026 թթ				
Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկական պլանների վրա;	Դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացում	2023-2028 թթ				
Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Դասապրոցեսին ավելի հեշտ ինտեգրում	Տարվա ընթացքում				
Ներդպրոցական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպում	Մշակութային ինտելեկտի զարգացում	Տարվա ընթացքում				
Համագործակցություն մշակութային օջախների հետ	Ավելի խորն ու մանրամասն ծանոթություն հեղինակների կյանքին;	2023-2028 թթ				
Ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծնողների մասնակցության ընդլայնում,ծնողական ժողովներ,հանդիպումներ ուսուցիչների հետ	Ուսուցիչ-ծնող,ծնող-դպրոց կապի ամրապնդում,կրթության որակի բարձրացում	2023-2028 թթ				
Ռազմահայրենասիրական և մշակութային միաջոցառումների կազմակերպում	Ռազմահայրենասիրության մակարդակի և ընկալման բարձրացում	2023-2028 թթ				
Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում,սպորտային տարբեր միջոցառումներ,սպորտլանդիաների կազմակերպում	Առողջ մարմնում առողջ հոգի	2023-2028 թթ				
«Թումո »տուփի հետ սերտ համագործակցություն	Երեխաների համար նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ,համագործակցություններ	2024-2025 թթ				
Դպրոցի շենքի հնարավորինս համապատասխանեցում ԿԱՊԿՈՒ սովորողների պահանջվող հարմարավետությանը	Կարիքների հնարավորինս ավելի հեշտ հաղթահարում	2023-2024 թթ				
Նյութատեխնիկական բազայի համալրում,նոր համակարգիչների ձեռքբերում,առարկայական	Պրակտիկ,տեսական և գործնական դասերի միվորում,ավելի արդյունավետ դասեր	2023-2026 թթ				

կաբինետների ստեղծում;						
Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Առավել մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը	Տարվա ընթացքում				
Գեղագիտական խմբակների հիմնում	Գեղեցիկի մասին պատկերացումներ ստեղծելու և աշխարհը գեղեցիկ ընկալելու հնարավորություն	2024-2025 թթ				
Սպորտդահլիճի բարեկարգում,ժամանակակից մարզական գույքի ձեռքբերում	Ավելի հետաքրքիր ու բովանդակալից դասի կազմակերպում,սպորտի նկատմամբ հետաքրքրության աճ	2023-2025 թթ				
Ուսհաստատության կանաչ տարածքների կազմակերպում	Երեխաների մոտ հոգատարության ու շրջապատի հանդեպ հետաքրքրասիրության ավելացում	2023-2028 թթ				
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի անցում էլեկտրոնայինի	Դպրոցի գործունեության առցանց հարթակում	2023-2028 թթ				
Հոգեբանների և ուսուցչի օգնականների աշխատանքների ապահովում	Ներգրավվածության աստիճանի բարձրացում	2023-2028 թթ				
Դպրոցի հեռանկարային ծրագրերի ,ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումներ,քննարկումներ	Դպրոցի հեռանկարային ծրագրերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորություն	Տարվա ընթացքում				
Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Ավելի բարեկարգ միջավայր ստեղծելու համար	2023-2028թթ				
Տիպային նոր մասնաշենքի կառուցում ըստ անհրաժեշտության	Ունենալ նոր տիպային դպրոց,որը կրթության որակը կհանգեցնի նոր որակի և դպրոցը կազատի բազմաթիվ խնդիրներից՝ կապված 2-րդ և 3-րդ մասնաշենքի հարմարեցված լինելու հետ	2023-2028 թթ				
Կրտսեր դպրոցի շենքային համարժեք պայմանների ստեղծում	ուսումնական առավել բարեհաջող կրթական միջավայր	2023-2028 թթ				
3-րդ մասնաշենքի սանհանգույցների վերանորոգում	Ավելի բարեկարգ սանհանգույցներ	2023-2028 թթ				
Մեթոդկաբինետների ,հանդիսությունների,դահլիճի ,հանդերձարանների	Հարմարավետ պայմանների ստեղծում աշխատողների համար	2023-2028 թթ				

վերանորոգում						
Մարզադաշտի արհեստական կանաչապատում	Ավելի մաքուր ու հարմարավետ լինելու նպատակով	2023-2028 թթ				

Վերջաբանի փոխարեն

Ես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիս, ով կրթության անվերապահ ջատագովներից է, հավատում է, որ միմիայն որակյալ կրթությամբ, սերունդներին ճիշտ դաստիարակություն տալով՝ կարող ենք հասնել անձի ձևավորման առաքելության գործում մեծագույն հաջողությունների, քանզի կրթությունը բանականության դեմքն է : Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր երեխայի հնարավոր լավագույն կրթություն տալը:

Վայոց ձորի << Վայքի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների վերոգրյալ ծրագիրը ներառում է իրատեսական դրույթներ, որոնք իրագործելի են մրցունակ և կարողունակ սերունդ դաստիարակելու:

Զարգացման ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման :